

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**ՏԻԳՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԴԱԴՈՒՆՑ**

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
(ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ)**

**ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2022**

ՀՏԴ 347.73(07)

ԳՄԴ 67.402g7

Մ 371

**Հրատարակության է երաշխավորվել ԵՊՀ իրավագիտության
ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից:**

Գրախոս՝ Ավագյան Գ. Կ. – ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի դասախոս, ՀՀ սնանկության դատարանի նախագահ

Մարկոսյան Տ. Ա. – Իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասիստենտ, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի իրավաբանական կլինիկայի դասախոս-կորդինատոր, Արդարադատության ակադեմիայի դասընթացավար, Սնանկության գործով կառավարիչների որակավորման հանձնաժողովի անդամ, ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողովի անդամ

Դադունց Տ. Կ. – ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի դասախոս, Սնանկության գործով կառավարիչների որակավորման հանձնաժողովի անդամ, ՀՀ արդարադատության նախարարության «Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամի տնօրեն

Մարկոսյան Տիգրան Արթուրի, Դադունց Տիգրան Կարենի

Մ 371 Ֆինանսական առողջացման վարույթը Հայաստանի Հանրապետությունում (գիտագործնական ձեռնարկ) /Տ.Ա. Մարկոսյան, Տ.Կ. Դադունց, ընդհանուր խմբագրությամբ՝ Ի.գ.դ., պրոֆ. Վ. Վ. Հովհաննիսյանի - Եր., ԵՊՀ հրատ., 2022, 104 էջ:

Աշխատությունում տեսական աղբյուրների, միջազգային փորձի, Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների դատական ակտերի, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայի այլ նյութերի հիման վրա վերլուծվել են ֆինանսական առողջացման վարույթի էությունը, ֆինանսական առողջացման ծրագրի կազմման, ներկայացման, քննարկման և հաստատման, ինչպես նաև ֆինանսական առողջացման վարույթի հետ կապված այլ հարցերը:

Սույն աշխատությունը կարող է օգտակար լինել սնանկության գործով կառավարիչների, փաստաբանների, դատավորների, իրավաբանական բուհերի և ֆակուլտետների դասախոսների, ասպիրանտների, ինչպես նաև սնանկության հիմնախնդիրներով հետաքրքրվող այլ անձանց համար:

Աշխատությունը կարող է ծառայել նաև որպես ուսումնական նյութ:

ՀՏԴ 347.73(07)

ԳՄԴ 67.402g7

ISBN 978-5-8084-2550-7

© ԵՊՀ հրատ., 2022

© Մարկոսյան Տ. Ա., Դադունց Տ. Կ., 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	5
§ 1. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	14
§ 2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՊԱՐՏԱՊԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ	18
§ 3. ՊԱՐՏԱՊԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԷՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	26
§ 4. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ	42
§ 5. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ	57
§ 6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ	75
§ 7. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԱՎԱՐՏԸ	82
§ 8. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	90
§ 9. ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՎ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ	100

ՆԱԽԱԲԱՆ

Յուրաքանչյուր պետության տնտեսության կայունության ապահովման երաշխիքներից մեկը սնանկության հետ կապված հարաբերությունների պատշաճ և լիարժեք իրավական կարգավորումն է: Այս համատեքստում սնանկության ինստիտուտի կարևորությունը նրանում է, որ այն կոչված է, մի կողմից, երաշխիքներ ստեղծել պարտատերերի պահանջները համամասնորեն բավարարելու, մյուս կողմից՝ հնարավորության դեպքում ապահովել պարտապանի վճարունակության վերականգնումը և նրա տնտեսական գործունեության շարունակականությունը:

Սնանկության ինստիտուտի նպատակն է հնարավորություն տալ բարեխիղճ և պարտաճանաչ պարտապանին վերականգնել իր բնականոն գործունեությունը, հաղթահարել ֆինանսական դժվարությունները, ինչպես նաև ապահովել անվճարունակ կազմակերպությունների վերակառուցումը և ֆինանսական վերակազմակերպումը, վերականգնել նրանց կենսունակությունը և միևնույն ժամանակ ապահովել պարտատերերի շահերի պաշտպանությունը, և յուրաքանչյուր դեպքում սնանկության գործընթացում պետք է հաշվի առնվեն տարբեր շահագրգիռ կողմերի՝ ներառյալ պարտապանների շահերը¹:

Այսինքն՝ սնանկության ինստիտուտի առաջնահերթ նպատակը ֆինանսական առողջացման հնարավորության

¹ Տե՛ս Սահմանադրական դատարանի 25.02.2008թ. թիվ ՍԴՈ-725, 27.01.2015թ. թիվ ՍԴՈ-1189, 26.05.2020թ. թիվ ՍԴՈ-1542 և 26.01.2021թ. թիվ ՍԴՈ-1572 որոշումները:

ընձեռումն է պարտապանին, և միայն դրա անհնարինության դեպքում՝ պարտապանի լուծարումը և նրա գույքի հաշվին պարտատերերի պահանջների բավարարումը: Ընդ որում՝ ինչպես սնանկության վարույթի ցանկացած ընթացակարգում, ֆինանսական առողջացման դեպքում ևս սնանկության վարույթի մասնակիցների բազմաթվությունը ենթադրում է նրանց միջև հակադիր շահերի առկայություն, որը դրսևորվում է ոչ միայն պարտապանի և պարտատիրոջ, այլև պարտատերերի միջև հարաբերություններում, քանի որ պարտապանի ֆինանսական վիճակը, որպես կանոն, բացառում է նրանց բոլոր պահանջների ամբողջությամբ բավարարումը: Այլ կերպ ասած՝ սնանկության վարույթում գործում է «պատերազմ՝ բոլորը բոլորի դեմ» (լատիներեն՝ *bellum omnium contra omnes*) սկզբունքը²:

«Սնանկության մասին» օրենքում³ ֆինանսական առողջացման հարցերին հիմնականում նվիրված է 8-րդ գլուխը: Չնայած ՀՀ օրենսդրությունը կարգավորում է պարտապանի ֆինանսական առողջացման հիմնական հարցերը, սակայն կարելի է նշել, որ կարգավորումները և, որ ամենակարևորն է, իրավական պրակտիկան հետ են մնում միջազգային լավագույն փորձից: Խոսքն այն մասին է, որ հաջող ֆինանսական առողջացումները գործնականում սնանկության վարույթում ոչ հաճախ հանդիպող երևույթներ են, քանի որ հիմնականում նախապատվությունը տրվում է լուծարման գործըն-

² Տե՛ս **Фролов И.В.**, Банкротство как административно-правовой механизм регулирования экономических конфликтов: Монография. Новосибирск, 2010, էջ 79:

³ Ընդունվել է 25.12.2006թ.: Ուժի մեջ է մտել 10.02.2007թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2007.01.31/7(531), Հոդ. 139: Այսուհետ նաև՝ Օրենք:

թացին և հարուցված սնանկության գործերի մեծ մասը անցնում է լուծարման⁴:

Պատճառներն այստեղ բազմաթիվ են: Նախևառաջ, կարևոր խնդիր է ֆինանսական առողջացման ինստիտուտի վերաբերյալ իրազեկվածության պակասը: Մասնավորապես, ինչպես ցույց են տալիս ոլորտում իրականացված հետազոտությունների շրջանակներում անցկացված հարցումները, հարցված պարտապանների 10 տոկոսն է ցանկացել ներկայացնել ֆինանսական առողջացման ծրագիր, 18 տոկոսը ցանկացել են, սակայն չեն ներկայացրել, իսկ 72 տոկոսը՝ չեն ցանկացել ներկայացնել, ընդ որում, հարցվածների այն մասը, որոնք չեն ցանկացել ծրագիր ներկայացնել, հիմնականում տեղյակ չեն եղել նման իրավունքի մասին (43.8 տոկոս)⁵: Հետևաբար, այս վարույթի կիրառման արդյունավետության տեսանկյունից կարևորվում է պարտապաններին առողջացման ինստիտուտի միջոցով ընձեռվող հնարավորություններին հասանելիության ապահովումը, շահագրգիռ կողմերի մասնագիտական կարողությունների, տարբեր մեխանիզմների կիրառման հմտությունների զարգացումը, ինչի համար էական նշանակություն ունի ֆինանսական առողջացման ծրագրի ձևանմուշների մշակումը և թեմայի շուրջ իրազեկման աշխատանքների, ուսուցման և վերապատրաստման դասընթացների կազմակերպումը:

⁴ Տե՛ս «Սնանկության ոլորտի բարեփոխման ճանապարհային քարտեզ և գործողությունների ծրագիր», էջ 7 (հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.moj.am/storage/uploads/123Road_Map_with_Action_Plan_ARM.pdf):

⁵ Տե՛ս ՀՀ սնանկության ոլորտի հետազոտության հաշվետվություն, էջ 10 (հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.moj.am/storage/uploads/OAM02.pdf>):

Բացի այդ, սնանկության ոլորտի հետազոտությունների շրջանակներում կատարված հարցումների համաձայն, հարցվածների 64%-ը ֆինանսական առողջացման ծրագիր կազմելու փորձ չի կատարել, ավելին, շատ դեպքերում պարտատերերի հետ բանակցելու պարտապանի փորձերը ձախողվել են և այս արդյունքները բացատրվում են մի շարք գործոններով: Նախ, արտադատական համաձայնությունները, որպես կանոն, չեն խրախուսվում ո՛չ պրակտիկայում և ո՛չ էլ օրենսդրությամբ⁶: Պարտապանները դժվարություններ են ունենում սնանկության ընթացքում պարտատերերի հետ համաձայնության գալու և իրենց գործունեությունը ֆինանսավորելու առումով և գործնականում խնդիրներ են առկա նաև պարտապաններին ցածր տոկոսադրույքներով ֆինանսավորման անհնարինության առումով, ինչը նպաստում է ֆինանսական առողջացման ծրագրերի ձախողմանը, ուստի այստեղ էլ առկա է պետական ինստիտուտների մասնակցությամբ հարցի լուծման անհրաժեշտությունը⁷: Այսպես, հետազոտությունների շրջանակներում իրականացված հարցումների համաձայն՝ սնանկ ճանաչվելու հարցի քննության փուլում կամ սնանկության վարույթում հարցված պարտապանների 35 տոկոսը փորձել են դատական կամ արտադատական կարգով համաձայնության գալ պարտատիրոջ հետ (հաշտության համաձայնություն, պարտատիրոջ կողմից սնանկ ճանաչելու մասին դիմումը ետ վերցնել և այլն), 64 տոկոսը չեն էլ փորձել, իսկ պարտատիրոջ հետ դատական կամ արտադատական կար-

⁶ Տե՛ս «Սնանկության ոլորտի բարեփոխման ճանապարհային քարտեզ և գործողությունների ծրագիր», էջ 7:

⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 54:

գով համաձայնության գալու պարտապանների ջանքերը, որպես կանոն, անհաջող են եղել:

Ֆինանսական առողջացման դեպքերի սակավությունը հետևանք է նաև այն հանգամանքի, որ սնանկության շեմին կանգնած պարտապանների մոտ չձանրաբեռնված ակտիվներ առկա չեն լինում կամ պարտապաններն ընդհանրապես գույք չեն ունենում և կենսունակ չեն լինում, իսկ գործող համակարգում առկա չեն բավարար խթաններ, որպեսզի սնանկության կառավարիչները գտնեն առողջացման տարբերակներ⁸:

Ստեղծված իրավիճակի հետևանքով, ըստ էության, ոչնչացվում է սնանկության վարույթում գտնվող կազմակերպությունների՝ տարիների ընթացքում ձևավորված սոցիալական ենթակառուցվածքը, ավելանում է գործազուրկների թվաքանակը, խաթարվում են կայացած արտադրատնտեսական կապերը՝ շղթայաբար տարածվելով ողջ տնտեսության վրա, և որպես հետևանք՝ փոշիանում են այդ կազմակերպությունների ակտիվները⁹: Եվ դա այն դեպքում, երբ արդի տնտեսության պայմաններում, որտեղ ձեռնարկության գործունեության համար տեխնիկական գիտելիքները, փորձը և գործարար համբավը ավելի կարևոր են, քան ֆիզիկական, նյութական ակտիվները, մարդկային ռեսուրսների և գործարար հարաբերությունների պահպանումը ավելի մեծ տնտե-

⁸ Տե՛ս նույն տեղում:

⁹ Տե՛ս **Սարգսյան Վ.**, Սնանկության կառավարման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (ոչ ֆինանսական հատվածի առևտրային կազմակերպությունների օրինակով)// տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 2020, էջ 17:

սական արժեք ունեն, ինչը հնարավոր չէ իրացնել լուծարման դեպքում¹⁰:

Վերոհիշյալ հանգամանքներով էլ պայմանավորված՝ «Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2019 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-294-Ն օրենքով¹¹ փորձ կատարվեց որոշակիորեն բարելավել նշված ինստիտուտը: Մասնավորապես, սահմանվեցին օրենսդրական երաշխիքներ պարտապանի վերաբերյալ տեղեկատվության համապարփակ հասանելիությունն ապահովելու համար՝ հնարավորություն ընձեռելով յուրաքանչյուր պարտատիրոջը կառավարչից պահանջելու տեղեկություններ պարտապանի գործունեության, ֆինանսական վիճակի, ներառյալ՝ գույքագրված ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ, որոնք, բնականաբար, էական նշանակություն ունեն պարտապանի ֆինանսական առողջացման հնարավորությունները գնահատելու համար: Բացի այդ, ֆինանսական առողջացման դեպքերի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և, ինչու ոչ, նաև «հաջողության պատմությունների» ամրագրման և հանրայնացման նպատակով սահմանվեց նաև ֆինանսական առողջացման դեպքերի վերաբերյալ վիճակագրական տվյալները իր տարեկան հաշվետվության շրջանակներում Արդարադատության նախարարություն ներկայացնելու կառավարչի պարտականությունը:

¹⁰ St’u Legislative Guide On Insolvency Law, United Nations Commission On International Trade Law, § 26, էջ 28 (հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://uncitral.un.org/sites/uncitral.un.org/files/media-documents/uncitral/en/05-80722_ebook.pdf):

¹¹ Ուժի մեջ է մտել 15.04.2020թ.: St’u ՀՀՊՏ 2019.12.26/100(1553), Հոդ.1242: Այսուհետ նաև՝ Օրենքի փոփոխություններ:

Ֆինանսական առողջացման դեպքերը խթանելու նպատակով Օրենքի փոփոխություններով երաշխավորվեց կառավարչի պարզևավճարի ստացումը պարտատերերի պահանջների բավարարման չափի հինգից տասը տոկոսի չափով ֆինանսական առողջացման ծրագիրը հաջողությամբ ավարտելու և պարտապանի առողջացման դեպքում: Մնանկության վարույթի ընթացքում պարտապանի ընթացիկ գործունեության շարունակականությունն ապահովելու և առողջացման համար պայմաններ ստեղծելու նպատակով ամրագրվեց պարտապանի հնարավորությունը՝ կառավարչի, պարտատիրոջ կամ պարտապանի դիմումով ստանձնելու նոր ֆինանսական պարտավորություններ:

Պարտապանի գույքակազմի, ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ համապարփակ տեղեկատվությունն ապահովելու նպատակով Օրենքի փոփոխություններով վերախմաստավորվեցին պարտապանի գույքի հայտարարագրման և ֆինանսական վիճակի վերլուծության ինստիտուտները՝ ոչ միայն հստակեցնելով դրանց դերը սնանկության վարույթում և իրացման մեխանիզմները, այլ նաև սահմանելով համապատասխան ձևանմուշներ: Ֆինանսական առողջացման ծրագրերի ընդունման հարցերում խոչընդոտների վերացման նպատակով էլ նախատեսվեց ապահովված պարտատերերի քվեարկության հնարավորությունը՝ սնանկության գործով բոլոր պարտատերերի՝ ապահովված պարտատեր հանդիսանալու դեպքում, համայնքային բյուջեի նկատմամբ դրամական պարտավորություններից բխող պահանջներով պարտատերերի մասնակցությունը քվեարկությանը՝ համայնքի ավագանու որոշման առկայության դեպքում,

ինչպես նաև ներդրվեցին մեխանիզմներ պետական բյուջեի նկատմամբ դրամական պարտավորություններից բխող պահանջներով պարտատերերի՝ ֆինանսական առողջացման ծրագրի քվեարկությանը մասնակցելու համար:

Հիշատակված համատեքստում ուշագրավ է, որ ֆինանսական առողջացման առումով վերջին տարիներին որոշակի դրական տեղաշարժ է նկատվում: Մասնավորապես, դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակված վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ եթե 2016թ. ներկայացվել է 20, հաստատվել է 17, 2017թ. ներկայացվել է 193, հաստատվել է 25, 2018թ. ներկայացվել է 24, հաստատվել է 18 ֆինանսական առողջացման ծրագիր, ապա 2019թ. ներկայացված ծրագրերի թիվը կազմել է 54 և հաստատվել է 42-ը, իսկ 2020թ.՝ 55 ծրագիր և հաստատվել է 41-ը¹²:

Չնայած վերոնշյալ դրական փոփոխություններին՝ ինչպես սնանկության ոլորտն ընդհանրապես, այնպես էլ ֆինանսական առողջացման վարույթը կարգավորող օրենսդրությունը ունի շարունակական զարգացման և բարելավման կարիք՝ քննարկման առանցքում, ի թիվս այլնի, ունենալով նախականխող առողջացման մեխանիզմների, առողջացման ծրագրերի քվեարկության արդյունավետ և բոլոր պարտատերերի ու պարտապանի շահերը հավասարակշռող կառուցակարգերի ներդրման, ապահովված իրավունքի առարկայի իրացման և առողջացման ծրագրերում ապահովված իրավունքի առարկայի օգտագործման հարցերի ողջամիտ հարաբերակցության ապահովման, պարտատերերին առողջացման ընթացքում համարժեք պաշտպանության գործուն կառուցակարգե-

¹² Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://court.am/hy/statistic>:

րի նախատեսման հիմնահարցերը: Մյուս կողմից, արդիական է մնում ֆինանսական առողջացման ինստիտուտի էության և բովանդակության համարժեք ընկալման համար գործնական նախադրյալների ստեղծումը:

§ 1. Ֆինանսական առողջացման վարույթի ընդհանուր բնութագիրը

Ֆինանսական առողջացման վարույթը պարտապանի վճարունակության վերականգնմանն ուղղված ընթացակարգերից է, որը սնանկության վարույթի կենտրոնական փուլերից մեկն է¹³: Այն կոչված է հնարավորություն ընձեռել պարտապանին ամբողջությամբ և լիովին առողջանալ՝ տնտեսական շրջանառության մեջ հանդես գալով որպես մրցունակ և ֆինանսապես կայուն սուբյեկտ և նպատակ ունի զերծ պահել պարտապանին պարտատերերի կողմից ներկայացվող պահանջներից, որպեսզի վերջինս ֆինանսապես վերականգնվի, վճարունակ դառնա, լիարժեք մասնակցի քաղաքացիական շրջանառությանը¹⁴:

Ֆինանսական առողջացման կարևորությունը բացատրվում է նրանով, որ այն համարվում է հենց սնանկության ինստիտուտի առաջնային նպատակ. անձին սնանկ ճանաչելու նպատակը քաղաքացիական շրջանառության կայունության ապահովումն է՝ այդ շրջանառության անվճարունակ մասնակիցներին ֆինանսապես առողջացնելու կամ նրանց քաղաքացիական շրջանառությունից դուրս մղելու նպատակով, որպեսզի վերջիններիս անվճարունակության հետևանքով չոտնահարվեն նաև քաղաքացիական շրջանառության մնա-

¹³ Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ԵԱՔԴ/1747/02/12 քաղաքացիական գործով 30.04.2015թ. որոշումը:

¹⁴ Տե՛ս Սահմանադրական դատարանի 27.01.2015թ. թիվ ՍԴՈ-1189 որոշումը:

ցած մասնակիցների շահերը¹⁵:

Ֆինանսական առողջացման վարույթը, ըստ էության, հետապնդում է հետևյալ նպատակները.

1. կարգավորել շահերի բախումը պարտապանի և պարտատերերի միջև՝ միաժամանակ պարտապանին հնարավորություն տալով իրականացնելու իր հետագա տնտեսական գործունեությունը¹⁶,

2. առավելագույնս բավարարել պարտատերերի պահանջները՝ ապահովելով առավել լավ արդյունք, քան կլինի պարտապանի լուծարման դեպքում,

3. պահպանել կենսունակ բիզնես գործունեությունը՝ դրանով նաև պահպանելով աշխատատեղերը և առևտրային կապերը մատակարարների հետ¹⁷:

Հետաքրքրական է, որ, օրինակ, արտասահմանյան իրավական համակարգերի գերակշիռ մասում ֆինանսական առողջացման ինստիտուտ, որպես այդպիսին, գոյություն չունի: ԱՄՆ-ում, օրինակ, տարածված է վերակազմակերպման մեխանիզմը, Ֆրանսիայում՝ «նախազգուշական միջոցառումները», իսկ Գերմանիայում, օրինակ, կիրառվում է «ինքնակառավարման» մեխանիզմը՝ ընկերության կառավարումը, այդ թվում՝ գույքի տնօրինումը արտաքին կառավարչի հսկողությամբ: Ամեն դեպքում, այս բոլոր ինստիտուտների նպատակը

¹⁵ Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ԵՄԴ/0049/04/15 սնանկության գործով 07.04.2017թ. որոշումը:

¹⁶ Տե՛ս Несостоятельность (банкротство): Учебный курс. В 2 т. / Под ред. д.ю.н., проф. **С.А. Карелиной**. Т. 1. – М.: Статут, 2019, էջ 618:

¹⁷ Տե՛ս Legislative Guide On Insolvency Law, United Nations Commission On International Trade Law, § 3, էջ 209:

մեկն է՝ անձի վճարունակության վերականգնումը¹⁸: Ընդ որում, այս նպատակը շարունակում է լինել առկա նույնիսկ այն դեպքում, երբ առողջացման արդյունքում կարող է փոխվել նրա գործունեության ուղղությունները, վաճառվել բիզնեսը այլ ընկերության՝ վերակազմակերպման ձևով կամ վատագույն սցենարով՝ հանգեցնել լուծարման¹⁹:

Հատկանշական է, որ պարտապանը կարող է իր վճարունակությունը վերականգնել և փաստացի առողջանալ ինչպես արտադատական մեխանիզմներով, այնպես էլ սնանկության վարույթում տարբեր կառուցակարգերի միջոցով և տարբեր փուլերում, այդ թվում՝ լուծարման վարույթում: Եվ չնայած ֆինանսական առողջացման վարույթը, որպես ընթացակարգ, սնանկության ողջ վարույթի մաս է կազմում, սակայն, ըստ էության, այն իրականացվում է դատական վարույթից դուրս և վճարունակության վերականգնման, առողջացման ինքնուրույն գործընթաց է: Հետևաբար, չնայած ֆինանսական առողջացման վարույթը, որպես ինքնուրույն ընթացակարգ, գոյություն ունի սնանկության այլ ընթացակարգերի հետ մեկտեղ, սակայն բավականին վիճելի և տեսականորեն սխալ է այն բնութագրել որպես դատական կարգով առողջացման եղանակ, և ներդնելով սնանկության այս ընթացակարգը՝ օրենսդիրը պարտապանին փաստացի տրամադրել է լրացուցիչ մեխանիզմ՝ իր բիզնեսը փրկելու համար այն դեպքում, երբ պարտապանն արդեն իսկ սնանկության հարաբերությ-

¹⁸ St'u Несостоятельность (банкротство): Учебный курс. В 2 т. / Под ред. д.ю.н., проф. **С.А. Карелиной**. Т. 1. – М.: Статут, 2019, էջ 611:

¹⁹ St'u Legislative Guide On Insolvency Law, United Nations Commission On International Trade Law, էջ 27, § 23:

յունների սուբյեկտն է²⁰:

Ֆինանսական առողջացման վարույթի ընդհանուր բնութագրի շրջանակում կարևոր է անդրադառնալ ֆինանսական առողջացման վարույթի և ֆինանսական առողջացման հարաբերակցությանը: Այսպես, «ֆինանսական առողջացումը» սնանկության վարույթում կիրառվում է մի քանի նշանակությամբ. նախևառաջ ֆինանսական առողջացման վարույթի կիրառման նպատակն է, երկրորդ՝ ֆինանսական առողջացման վարույթի ցանկալի հետևանքն է, երբ բարեխիղճ և պարտաճանաչ պարտապանը հաղթահարում է իր ֆինանսական դժվարությունները, վերականգնում է իր բնականոն գործունեությունը՝ միևնույն ժամանակ ապահովելով պարտատերերի շահերի պաշտպանությունը և երրորդ՝ սնանկության վարույթի ցանկացած փուլում, այդ թվում՝ ֆինանսական առողջացման վարույթից դուրս՝ լուծարման փուլում, պարտապանի վճարունակության վերականգման միջոցով պարտատերերի պահանջների բավարարումն է և վերադարձը բնականոն գործունեությանը:

Այսպիսով, ֆինանսական առողջացման վարույթը հանդես է գալիս որպես սնանկության վարույթի ինքնուրույն ընթացակարգ, որը կոչված է հնարավորություն ընձեռել ամբողջությամբ բավարարել պարտատերերի պահանջները և ապահովել պարտապանի հետագա մասնակցությունը քաղաքացիական շրջանառությանը:

²⁰ St' u Несостоятельность (банкротство): Учебный курс. В 2 т. / Под ред. д.ю.н., проф. **С.А. Карелиной**. Т. 1. – М.: Статут, 2019, էջ 610:

§ 2. Ֆինանսական վիճակի վերլուծությունը՝ որպես պարտապանի ֆինանսական առողջացման հնարավորության գնահատման միջոց

Պարտապանի ֆինանսատնտեսական վիճակի վերլուծության պատշաճ իրականացումը անհրաժեշտ է ինչպես անվճարունակությունը կանխելու, այնպես էլ սնանկության ընթացակարգերի պատշաճ իրականացման առումով:

Պարտապանի ֆինանսատնտեսական իրավիճակի վերլուծության նշանակությունը կարևորվում է նրանով, որ որքանով ճիշտ են ախտորոշվում ու դասակարգվում առողջ և մրցունակ կազմակերպությունները պոտենցիալ սնանկ կազմակերպություններից, այդքանով մեծանում է հավանականությունը խուսափելու սնանկության գործընթացում ընդգրկվելուց, առավել ևս՝ սնանկության հետևանքով լուծարվելուց, ինչը նախապայման է դառնում սնանկության դեպքերը սահմանափակելու, դրանով իսկ հասարակությանը հասցվող մարդկային, նյութական ու ֆինանսական վնասները նվազագույնի հասցնելու համար²¹:

Ֆինանսական առողջացման շրջանակներում ֆինանսական վիճակի վերլուծությունը կարող է կիրառվել հետևյալ նպատակներով՝

- գնահատել ֆինանսական առողջացման ծրագրի իրատեսականությունը և իրագործելիությունը,

²¹ Տե՛ս **Սարգսյան Վ.**, Սնանկության կառավարման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (ոչ ֆինանսական հատվածի առևտրային կազմակերպությունների օրինակով) // տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 2020, էջ 18:

- որոշել ծրագրի ցուցանիշների ձեռքբերման և պարտքի մարման ժամանակացույցի պահպանման մակարդակը,
- արտաքին և ներքին պայմանների փոփոխության կապակցությամբ գնահատել ֆինանսական առողջացման ծրագրի և պարտքի մարման ժամանակացույցի փոփոխման նպատակահարմարությունը,
- վերահսկել պարտատերերի պահանջներով ընթացիկ վճարումների ժամանակին իրականացումը,
- ներկայացնել պարտքի մարման ժամանակացույցի կատարման վերաբերյալ օպերատիվ տեղեկատվություն պարտատերերի ժողովին (խորհրդին)²²:

Հարկ է նկատել, որ Օրենքը ևս կարևոր տեղ է հատկացնում պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծությանը՝ այդ պարտականությունը դնելով սնանկության գործով կառավարչի վրա: Այսպես, նախ Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը սահմանում է, որ կառավարիչը վերլուծում է՝

- պարտապանի ֆինանսական վիճակը,
- սնանկության պատճառները,
- պարտապանի ֆինանսական, տնտեսական և ներդրումային գործունեությունը և նրա դրությունն ապրանքային շուկայում:

Բացի այդ, առանձնակի կարևորություն տալով այս գործիքին, Օրենքի 58-րդ հոդվածը պարտականություն է սահմանում սնանկության գործով կառավարչի համար՝ պարտապանին սնանկ ճանաչելուց հետո՝ 35 օրվա ընթացքում դատա-

²² Տե՛ս Несостоятельность (банкротство): Учебный курс. В 2 т. / Под ред. д.ю.н., проф. **С. А. Карелиной**. Т. 1. – М.: Статут, 2019, էջ 469:

րան ներկայացնելու պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծությունը, ընդ որում՝ պարտապանի գործունեությունը բազմաբնույթ լինելու և մեծ ծավալներ ունենալու կամ այլ հարգելի պատճառների առկայության դեպքում դատարանը հնարավորություն ունի երկարաձգել ֆինանսական վիճակի վերլուծությունը ներկայացնելու ժամկետը ողջամիտ ժամկետով:

Իրականում այս գործիքի ճիշտ կիրառման արդյունքում բավական լավ պատկեր կարող է կազմվել այն մասին՝ արդյոք պարտապանը հնարավորություն ունի առողջանալու, թե լուծարման տարբերակն է լավագույն լուծումը, ինչպես նաև այն հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու այն միջոցառումների մասին, որոնք հնարավոր կլինի կիրառել առողջացման կոնկրետ դեպքում: Ամեն դեպքում, ֆինանսական առողջացումը միշտ ֆինանսական հիմք է ունենում, քանի որ, եթե անձը հասել է այն փուլին, որ սնանկ է ճանաչվել և ներկայացվում է ֆինանսական առողջացման ծրագիր, գործում է այն կանխավարկածը, որ անձը ֆինանսական դժվարություններ ունի:

Օրենքը սահմանում է այն նվազագույն տվյալները, որոնք պետք է պարունակի պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծությունը, ըստ այդմ՝ տեղեկություններ՝

- սնանկության պատճառների մասին,
- դատական ծախսերի փոխհատուցման և կառավարչի վարձատրության համար պարտապանի միջոցների բավարար լինելու մասին,
- պարտապանի վճարունակության վերականգնման հնարավորությունների մասին,

- պարտապանի դեբիտորական պարտավորությունների հավաքման հնարավորության մասին,
- Օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված պայմանագրերի մասին,
- Օրենքի 54-րդ հոդվածով նախատեսված գործարքների մասին,
- կեղծ կամ կանխամտածված սնանկության հատկանիշների առկայության, ինչպես նաև սնանկության վարույթը ֆինանսական առողջացմամբ ավարտելու հնարավորության մասին:

Այստեղ հարկ է հատուկ ուշադրություն դարձնել երկու հանգամանքի վրա: Խոսքն այն մասին է, որ ֆինանսական վիճակի վերլուծության արդյունքում սնանկության գործով կառավարիչը պետք է գա եզրահանգման պարտապանի վճարունակության վերականգնման հնարավորությունների և սնանկության վարույթը ֆինանսական առողջացմամբ ավարտելու հնարավորության հարցերի մասին: Ահա այս երկու կարևոր կետերն են, որ ընդգծում են ֆինանսական վիճակի վերլուծության և սնանկության գործով կառավարչի դերը ֆինանսական առողջացման հիմքերը ստեղծելու հարցում:

Հատկանշական է նաև, որ Օրենքի փոփոխությունների արդյունքում Արդարադատության նախարարի 2020 թ. մարտի 12-ի N 107-Ն հրամանով²³ սահմանվել է պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծության ձևը և բովանդակությունը: Մասնավորապես, ֆինանսական վիճակի վերլուծությունում շարադրվում են՝

- **սնանկության պատճառները**, որի շրջանակներում

²³ Ուժի մեջ է մտել 15.04.2020թ.: Տե՛ս ՀՀԳՏ 2020.03.20/10(678), Հոդ.70:

շարադրվում են այն հանգամանքները, որոնք, կառավարչի եզրահանգմամբ, հանգեցրել են պարտապանի սնանկության,

- **դատական ծախսերի փոխհատուցման համար պարտապանի միջոցների բավարար լինելը**, որի շրջանակներում շարադրվում են վերլուծությունները, որոնց հիման վրա եզրահանգում է կատարվել դատական ծախսերի փոխհատուցման հնարավորության վերաբերյալ, ինչպես նաև արվում են եզրահանգումներ դատական ծախսերի փոխհատուցման հնարավորության վերաբերյալ,
- **կառավարչի վարձատրության համար պարտապանի միջոցների բավարար լինելը**, որի շրջանակներում շարադրվում են վերլուծությունները, որոնց հիման վրա եզրահանգում է կատարվել կառավարչի վարձատրության համար պարտապանի միջոցների բավարար լինելու հնարավորության վերաբերյալ, ինչպես նաև արվում են եզրահանգումներ կառավարչի վարձատրության համար պարտապանի միջոցների բավարար լինելու հնարավորության վերաբերյալ,
- **պարտապանի դեբիտորական պարտավորությունները**, որի շրջանակներում շարադրվում է պարտապանի դեբիտորական պարտավորությունների ընդհանուր նկարագիրը՝ դեբիտորների թիվը, պարտքի չափը, պարտքի առաջացման հիմքերը, պատճառները, հայցային վաղեմության ժամկետն անցած լինելու հանգամանքը, դրա պատճառը և այլն, դեբիտորական պարտավորությունների հավաքագրման ուղղությամբ

իրականացվելիք գործողությունները, վերլուծություններ և եզրահանգում դրանց հավաքագրման հնարավորությունների վերաբերյալ,

- **Օրենքի 49-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ պարտապանի՝ կենսական նշանակություն ունեցող ապրանքների և ծառայությունների մատուցմանն ուղղված պայմանագրերը**, որի շրջանակներում շարադրվում են պարտապանի՝ կենսական նշանակություն ունեցող ապրանքների և ծառայությունների մատուցմանն ուղղված պայմանագրերի նկարագիրը, դրանցից յուրաքանչյուրի մասով՝ հիմնավորում պարտապանի համար կենսական նշանակություն ունենալու հանգամանքի վերաբերյալ, եզրահանգում՝ դրանք հաստատելու նպատակով դատարան ներկայացնելու անհրաժեշտության և հնարավորության մասին՝ նշելով հաստատվելու դեպքում այդ պայմանագրերով սահմանված վճարումների կատարման աղբյուրները և կարգը),
- **Օրենքի 54-րդ հոդվածով նախատեսված գործարքները (երրորդ անձանց կատարված փոխանցումների և գույքի օտարումների վերաբերյալ գործարքներ)**, որի շրջանակներում շարադրվում են պարտապանի կողմից իրականացված՝ Օրենքի 54-րդ հոդվածով սահմանված գործարքների նկարագիրը, յուրաքանչյուր գործարքի մասով վերլուծություններ դատարան դիմելու համար իրականացվելիք գործողությունների, ինչպես նաև դատական պրակտիկայի հաշվառմամբ՝ ակնկալվող հնարավոր դատական ակտի մասին,

- **դատարանում պարտապանի մասնակցությամբ գույքային (դրամական) բնույթի պահանջներով հարուցված և քննվող քաղաքացիական գործերը**, որի շրջանակներում շարադրվում են պարտապանի մասնակցությամբ, այդ թվում՝ Օրենքի 4-րդ հոդվածի իմաստով Սնանկության դատարանին ենթակա գույքային (դրամական) բնույթի պահանջներով հարուցված և քննվող քաղաքացիական գործերի առկայության վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև այդ գործերի շրջանակներում վիճելի իրավահարաբերությունների նկարագիրը, վերլուծություններ դրանց լուծման ուղղությունների և հնարավորությունների վերաբերյալ):

Որպես եզրահանգում ֆինանսական վիճակի վերլուծության մեջ նշվում են՝

- **կեղծ կամ կանխամտածված սնանկության հատկանիշների առկայությունը**, որի շրջանակներում կատարվում են վերլուծություններ և եզրահանգում՝ կեղծ կամ կանխամտածված սնանկության հատկանիշների առկայության կամ բացակայության վերաբերյալ, առկայության դեպքում՝ իրականացվելիք գործողությունները,
- **պարտապանի վճարունակության վերականգնման հնարավորությունները**, որի շրջանակներում շարադրվում են պարտապանի, պարտատերերի կամ կառավարչի կողմից ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացնելու մտադրության մասին վերլուծություններ, որոնց հիման վրա եզրահանգում է կատարվել

պարտապանի վճարունակության վերականգնման հնարավորության վերաբերյալ, ինչպես նաև որպես եզրահանգում՝ նշվում է պարտապանի վճարունակության վերականգնման և սնանկության վարույթը ֆինանսական առողջացմամբ ավարտելու հնարավորության վերաբերյալ),

• **այլ վերլուծություններ և եզրահանգումներ:**

Հարկ է կրկին շեշտել, որ պարտապանի ֆինանսական վիճակի մասին տվյալները չափազանց կարևոր են ֆինանսական առողջացման համար, այդ իսկ պատճառով խիստ ցանկալի է, որ ֆինանսական առողջացման ծրագրերի բովանդակությունը ստուգելիս հատուկ ուշադրություն դարձվի այդ հանգամանքի վրա:

Որպես կարևոր լրացուցիչ տվյալներ՝ ֆինանսական առողջացման ծրագրերում կարող են նշվել.

- ✓ ակտիվների և պարտավորությունների մասին հաշվետվություններ,
- ✓ դրամական միջոցների մասին հաշվետվություններ,
- ✓ տեղեկություններ պարտապանի առկա ֆինանսական վիճակի պատճառների մասին,
- ✓ պարտապանի դերը ֆինանսական առողջացման ընթացքում,
- ✓ ծրագրի իրականացման նկատմամբ հսկողությունը,
- ✓ պարտապանի աշխատակազմի հետ կապված հարցերը,
- ✓ պարտապանի ղեկավար կազմի վարձատրությունը,
- ✓ այն անձինք, որոնք պետք է պատասխանատու լինեն պարտապանի բիզնեսի հետագա կառավարման համար:

§ 3. Պարտապանի ֆինանսական առողջացման ծրագրի էությունը և բովանդակությունը

Ֆինանսական առողջացման ծրագրի էությունը: Ֆինանսական առողջացման ծրագիրը ֆինանսական առողջացման վարույթի էական, անհրաժեշտ տարրն է: Ընդ որում՝ այստեղ պետք է նկատի ունենալ ոչ միայն այն փաստաթուղթը, որում արտացոլված են ֆինանսական առողջացման վարույթի ողջ անհրաժեշտ պայմաններն ու տեղեկատվությունը, այլ նաև այն միջոցառումների և գործողությունների համախումբը, որոնք պետք է կիրառվեն այդ վարույթի ընթացքում:

Այս առումով Օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ ֆինանսական առողջացման ծրագիր է համարվում պարտապանի վճարունակությունը վերականգնելու նպատակով նրա նկատմամբ կիրառվող, օրենքով չարգելված միջոցառումների համալիրը, որի իրականացման դեպքում պարտապանը չի լուծարվելու կամ չի կայացվելու ֆիզիկական անձի սնանկության գործը պարտավորությունների կատարումից ազատելով ավարտելու մասին վճիռ:

Այսինքն՝ մի կողմից ֆինանսական առողջացման ծրագիրն այն փաստաթուղթն է, որով, ըստ էության, կանխորոշվում է ֆինանսական առողջացման վարույթի ողջ ընթացքը. սահմանվում են այն պայմանները, որոնք անհրաժեշտ են լինելու ապահովել, նախատեսվում են պարտապանի գործունեության անհրաժեշտ պայմաններն ու ուղղությունները, պարտատերերի պահանջների բավարարման վերաբերյալ գնահատականները, կառավարչի վարձատրությունը, այսինքն՝ այն ողջ տեղեկատվական բազան, որով պետք է

շարժվեն պարտապանն ու շահագրգիռ կողմերը ֆինանսական առողջացման վարույթի ընթացքում: Մյուս կողմից, ֆինանսական առողջացման ծրագիրը միջոցառումների համալիր է, որի իրականացման հետևանքով ակնկալվում է այնպիսի արդյունքի ստացում, որի շրջանակներում հնարավոր կլինի բավարարել պարտատերերի պահանջները, ընդ որում, ֆինանսական առողջացման ծրագիրը կարող է ունենալ իրականացման որոշակի հավանականություն, որի բարձր կամ ցածր լինելը պետք է որոշի դատարանը՝ հաշվի առնելով նաև պարտատերերի կողմից ներկայացված առարկությունները²⁴:

Ֆինանսական առողջացման ծրագրի բովանդակությունը: Նախևառաջ, հարկ է նկատել, որ ՀՀ օրենսդրությամբ ֆինանսական առողջացման ծրագրի՝ որպես փաստաթղթի օրինակելի ձևեր կամ դրա կազմման կանոններ սահմանելու լիազորող դրույթներ նախատեսված չեն, ինչը, բնականաբար, չի նպաստում արդյունավետ պրակտիկայի ձևավորմանը՝ ոչ պատշաճ բովանդակությամբ, անիրատեսական, օրենքով նախատեսված նվազագույն պայմաններին չհամապատասխանող ծրագրեր ներկայացնելու կամ ընդհանրապես ծրագրեր չներկայացնելու առումով: Այս տեսանկյունից կարևորվում է ֆինանսական առողջացման ծրագրի բովանդակությունը, ընդ որում՝ ծրագրի բովանդակությունը՝ որպես ծրագրային փաստաթուղթ և որպես ծրագրով նախատեսված՝ պարտապանի առողջացմանն ուղղված միջոցառումների համալիր:

Օրենքը նախատեսում է այն պարտադիր պայմանները,

²⁴ Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ԵԷԴ/0057/04/15 սնանկության գործով 27.05.2020թ. որոշումը:

որոնք պետք է պարունակի ֆինանսական առողջացման ծրագիրը: Մասնավորապես, Օրենքի 61-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է, որ ֆինանսական առողջացման ծրագիրը պետք է ներառի՝

- ապահովված, չապահովված և այլ խմբերի պարտատերերի նկատմամբ պարտավորությունների մարման ժամանակացույցը, նրանց պահանջների դիմաց վճարումների կատարման կարգը, այդ թվում՝ պահանջների բավարարման կարգը պարտապանին պատկանող անշարժ և պետական գրանցման ենթակա այլ գույքով,

- պարտապանին պարտավորություններից ազատելու, դրանք հետաձգելու կամ վերաձևակերպելու կարգը և չափերը,

- պարտապանի վճարունակությունը վերականգնելու համար Օրենքի 59-րդ հոդվածով նախատեսված միջոցառումների բովանդակությունը և իրականացման կարգն ու ժամկետները, դրանց իրականացման արդյունքում պարտապանի գործունեությունը շարունակելիս պարտատերերի պահանջների բավարարման հնարավորությունների ավելացման հիմնավորումները, պարտապանին պատկանող գույքի վաճառքի դեպքում՝ վաճառվող գույքի կազմը,

- ֆինանսական առողջացման ծրագրի կատարման համար անհրաժեշտ՝ կառավարչի և այլ մասնագետների, պարտապանի ղեկավարի վարձատրության և վարչական ծախսերի փոխհատուցման կարգը և չափերը:

Սրանք իրականում այն նվազագույն պահանջներն են, որոնք անհրաժեշտ են ֆինանսական առողջացման ծրագիր կազմելու և ներկայացնելու համար: Սակայն պետք է հաշվի

առնել, որ, ընդհանուր առմամբ, որակյալ ֆինանսական առողջացման ծրագիրը պետք է ներառի այլ շատ կարևոր դրույթներ ևս, օրինակ՝

✓ պայմաններ, որոնք կբնութագրեն պարտապանի ընդհանուր ֆինանսական վիճակը,

✓ պարտապանի՝ ֆինանսական միջոցներ ստանալու աղբյուրները,

✓ պարտապանի տնտեսական գործունեության արդյունավետությունը պահպանելուն ուղղված միջոցառումները: Տեսականորեն նման միջոցառումները կարող են լինել՝

- տնտեսական բնույթի, որի ներքո կարող են դիտարկվել, օրինակ՝ շահութաբերություն չապահովող գործունեության դադարեցումը, ձեռնարկատիրական գործունեության ուղրտի փոփոխությունը, պարտապանի գույքի վաճառքը,

- կազմակերպչական բնույթի, օրինակ՝ վերակազմակերպում, պրոֆեսիոնալ կառավարող սուբյեկտների ներգրավում,

- ֆինանսական բնույթի, օրինակ՝ ֆինանսավորման աղբյուրների որոշում, ներդրումների ապահովում, միջոցների օգտագործման ուղղությունների որոշում,

- տեղեկատվական բնույթի, որին օրենսդրությունը հատուկ անդրադարձ չի կատարում, սակայն այն ևս կարևոր է հաջող ֆինանսական առողջացում իրականացնելու համար, օրինակ՝ լրացուցիչ գովազդ՝ մարկետինգային գործունեության նոր ուղղությունների և արտադրվելիք նոր ապրանքների կամ մատուցվելիք նոր ծառայությունների վերաբերյալ, առաջարկների գնահատում և այլն²⁵:

²⁵ Տե՛ս *Карелина С. А.* Правовое регулирование несостоятельности (банкротства): Учебно-практич. пособие. М., 2007, էջ 149:

Ֆինանսական առողջացման ծրագրի ձևի և բովանդակության առումով ուշագրավ է ռուսական փորձը: Մասնավորապես, ՌԴ Արդյունաբերության և էներգետիկայի նախարարության և Տնտեսական զարգացման նախարարության 2007 թվականի ապրիլի 25-ի համատեղ հրամանով հաստատվել են Ֆինանսական առողջացման ծրագիր կազմելու մեթոդական ցուցումներ²⁶: Ըստ այդմ՝ առաջարկվում է ֆինանսական առողջացման ծրագրում ներառել հետևյալ բաժինները.

• **«Ֆինանսական առողջացման ծրագր» բաժին, որի ամփոփագիրը** ֆինանսական առողջացման ծրագրում ներառված կարևորագույն դրույթների ամփոփումն է:

• **«Պարտապանի մասին ընդհանուր տեղեկություններ»** բաժին, որտեղ կարող են ներառվել՝

- ✓ պարտապանին նույնականացնող տվյալները,
- ✓ նրա կազմակերպատիրական կառուցվածքը,
- ✓ հակիրճ տեղեկատվություն կազմակերպության ստեղծման պատմության և գործունեության մասին,
- ✓ կառավարման մարմինների կառուցվածքը և տվյալները, անհատական կազմը,
- ✓ տեղեկատվություն կազմակերպության հիմնական բաժնետերերի (մասնակիցների), կազմակերպության կանոնադրական կապիտալում պետական մասնաբաժնի մասին, տեղեկատվություն դուստր և կախյալ ձեռնարկությունների, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների վերաբերյալ,
- ✓ տեղեկատվություն արդյունաբերական, ֆինանսական

²⁶ Տե՛ս հետևյալ հղմամբ՝

<http://www.consultant.ru/cons/cgi/online.cgi?req=doc&base=LAW&n=69134&fld=134&dst=100010,0&rnd=0.3853783869682095#09193484230857716>:

խմբերին և ասոցիացիաներին մասնակցության մասին:

• **«Տեղեկատվություն պարտապանի ընթացիկ գործունեության մասին»²⁷** բաժինը կարող է արտացոլել հետևյալ տեղեկատվությունը.

✓ տեղեկատվություն տնտեսական գործունեության այն ոլորտի մասին, որտեղ գործում է պարտապանը, ներառյալ՝ ֆինանսական առողջացման ծրագրի ժամանակահատվածում տվյալ ոլորտի զարգացման հեռանկարները, ոլորտում մրցակցության մակարդակը, տեղեկատվություն կազմակերպության հիմնական մրցակիցների վերաբերյալ, ինչպես նաև այլ գործոնների գնահատումը, որոնք կարող են էապես ազդել ոլորտի զարգացման վրա՝ ֆինանսական առողջացման ծրագրի գործողության ընթացքում,

✓ տեղեկատվություն պարտապանի գործունեության վայրի (մարզի, քաղաքի) սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին,

✓ տեղեկատվություն կազմակերպության հիմնական արտադրական ակտիվների կազմի և կառուցվածքի, արտադրական ուժերի ծանրաբեռնման և մոբիլիզացման հնարավորությունների վերաբերյալ,

✓ տեղեկատվություն կազմակերպության աշխատանքային ռեսուրսների վերաբերյալ (անձնակազմի թվաքանակ և որակավորում, աշխատանքային ռեսուրսների ոլորտում կազմակերպության քաղաքականություն)

²⁷ Այս տվյալները հնարավոր է ստանալ Օրենքի 19-րդ և 29-րդ հոդվածների հիման վրա պարտապանի գործունեության, ֆինանսական վիճակի, ներառյալ՝ գույքագրված ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ պահանջելու միջոցով:

✓ թողարկվող ապրանքների (մատուցվող ծառայությունների) հիմնական տեսակները, ընթացիկ և պլանավորված ծավալները,

✓ հումքի, նյութերի և ծառայությունների աղբյուրները (նշելով մատակարարներին), որոնք կազմում են կազմակերպությանը տրամադրվող բոլոր մատակարարումների ավելի քան 10 տոկոսը, և այն գործոնների գնահատումը, որոնք կարող են էապես ազդել կազմակերպությանը հումքով և նյութերով ապահովելուն ֆինանսական առողջացման ծրագրի ընթացքում,

✓ կազմակերպության արտադրանքի (ծառայությունների) վաճառքի հիմնական ոլորտները, որոնք կազմում են եկամուտների ավելի քան 10 տոկոսը, շուկայավարման համակարգի կազմակերպումը և գործոնների գնահատումը, որոնք կարող են էապես ազդել կազմակերպության ապրանքների (ծառայությունների) վաճառքի վրա,

✓ տեղեկատվություն պարտապանի մասնակցությամբ դատական և արբիտրաժային վարույթների վերաբերյալ, ինչպես նաև պարտապանի մասնակցությամբ կայացված դատական ակտերի վերաբերյալ, որոնցով, ի թիվս այլնի, անդրադարձ է կատարվել նաև նրա ակտիվների ծանրաբեռնմանը կամ տնօրինմանը:

• **«Պարտապանի ընթացիկ ֆինանսական վիճակի վերլուծություն»** բաժնում վերլուծվում է կազմակերպության ընթացիկ ֆինանսական վիճակը առնվազն 3 տարվա կտրվածքով: Այս բաժնում կարող է ներառվել.

1. Կազմակերպության ակտիվների և պարտավորությունների վերլուծությունը:

Ակտիվների և պարտավորությունների վերլուծությունն իրականացվում է ըստ ակտիվների խմբերի, որպեսզի գնահատվի ակտիվների ձևավորման և օգտագործման արդյունավետությունը ձեռքբերված պարտավորություններին համապատասխան: Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել այն հաշվեկշռային տարրերի փոփոխությանը, որոնց շեղումը կազմել է 10 տոկոսից ավելի և անդրադառնալ այդ փոփոխության պատճառներին: Պետք է նաև վերլուծվեն ժամկետանց պարտավորությունների առաջացման պատճառները:

2. Գործունեության ֆինանսական արդյունքների վերլուծությունը:

Ֆինանսական արդյունքների վերլուծությունը ներկայացնում է կազմակերպության եկամուտների և ծախսերի կառուցվածքի պատկերը, ոչ շահութաբեր գործունեության պատճառները: Վերլուծությունն իրականացնելիս ցանկալի է նշել այն պատճառները, որոնք առաջացրել են եկամտի և ծախսերի որոշակի կետերի փոփոխություն՝ 10 տոկոսից ավելի գումարով:

3. Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեությունը բնութագրող գործակիցների վերլուծությունը:

Պարտապանի ֆինանսական վիճակը վերլուծելիս կարող են օգտագործվել հետևյալ գործակիցները և ցուցանիշները.

- իրացվելիության բացարձակ ցուցանիշը,
- ընթացիկ իրացվելիությունը,
- պարտապանի պարտավորությունների ապահովման ցուցանիշը,
- ընթացիկ պարտավորություններով վճարունակության աստիճանը

- ինքնավարության գործակիցը (ֆինանսական անկախություն),

- սեփական շրջանառու կապիտալով ապահովվածության ցուցանիշը,

- դեբիտորական պարտքերի հարաբերակցությունը ընդհանուր ակտիվներին,

- ժամկետանց պարտավորությունների մասնաբաժինն ընդհանուր պարտավորությունների մեջ,

- զուտ ակտիվները,

- ծախսերի մասնաբաժինն ընդհանուր եկամուտում:

Ֆինանսական առողջացման ծրագրի միջոցառումները:

Ինչպես բխում է Օրենքից՝ ֆինանսական առողջացման ծրագիրը օրենքով չարգելված միջոցառումների համալիր է: Հաշվի առնելով նման միջոցառումների սպառիչ նախատեսման անհնարինությունը՝ Օրենքի 59-րդ հոդվածը սահմանում է ֆինանսական առողջացման ծրագրի շրջանակներում իրականացվող հնարավոր միջոցառումների ոչ սպառիչ ցանկը.

- պարտապանի ամբողջ գույքի կամ դրա մի մասի վաճառքը,

- պարտապանի գույքը պարտատերերին հաշվանցով փոխանցելը,

- պարտապանի գույքի գրավադիրումը,

- շահութաբերություն չապահովող գործունեության դադարեցումը և ձեռնարկատիրական գործունեության ոլորտի փոփոխությունը,

- անշահավետ գործարքների փոփոխումը կամ դադարեցումը,

- պարտքի վերակառուցումը (պարտքի մարման ժամ-

կետների հետաձգում, վերաձևակերպում, պարտավորությունների կատարումից ազատում),

- պարտքի փոխարինումը արժեթղթերով,
- դեբիտորական պարտավորությունների բռնագանձումը,

- նոր վարկի ստացումը,
- նոր ներդրումների իրականացումը,
- պարտապանի վերակազմակերպումը,
- նոր բաժնետոմսերի թողարկումը կամ հետգնումը.

- պարտապան կազմակերպության մասնակցի (մասնակիցների) սեփականությունը հանդիսացող պարտապան կազմակերպությունում ունեցած բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայաբաժինների և օրենքներով սահմանված այլ արժեթղթերի) օտարումը, վարձակալության տալը, գրավադրումը կամ այլ ձևով ծանրաբեռնումը,

- օրենքով չարգելված այլ միջոցառումներ:

Քննարկման նպատակով հարկ է անդրադառնալ ֆինանսական առողջացման ծրագրում ներառվող մի քանի միջոցառումների:

Օրենքի 59-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ ֆինանսական առողջացման ծրագրով կարող է նախատեսվել, օրինակ, պարտքի վերակառուցումը, այդ թվում՝ պարտքի մարման ժամկետների հետաձգում, վերաձևակերպում, պարտավորությունների կատարումից ազատում: Սա ֆինանսական առողջացման դասական միջոցառումներից մեկն է, քանի որ այն բուն ֆինանսական բնույթի միջոցառում է: Խոսքը գնում է պարտքի մարման նոր ժամանակացույցի կամ այլ կերպ պարտավորության նորացման մասին:

Այս համատեքստում ուշագրավ է համեմատական անցկացնել պարտքի վերակառուցման և ֆինանսական առողջացման հնարավոր այլ մեխանիզմների միջև: Ջուտ տեսական առումով՝ պարտքի վերակառուցումը կարող է ներառել հիմնական պայմանագրով վճարումների հետաձգման կամ տարաժամկետման պայմաններ, ինչպես նաև այլ՝ խառը պայմանագրերի տարրեր: Պարտքի վերակառուցման վերաբերյալ համաձայնությունը պարտատիրոջ համար ենթադրում է ոչ միայն պարտապանի հանդեպ որոշակի պայմաններով զիջումների գնալը, այլ նաև դրանով իրենց պահանջների մի մասից հրաժարվելը:

Վերոհիշյալը թույլ է տալիս եզրակացնել, որ պարտքի վերակառուցումը և ֆինանսական վերականգնման գործընթացը որոշակի իմաստով հետապնդում են նման նպատակներ, բայց պարտքի վերակառուցումը, ըստ էության, ավելի նեղ հասկացություն է, որը հաշվի չի առնում պարտատերերի հավաքական շահերը և կարող է հանդիսանալ պարտապանի ֆինանսական առողջացման եղանակներից պարզապես մեկը²⁸:

Հարկ է նկատի ունենալ, որ պարտքի վերակառուցմանը համանման մեխանիզմ կարող է կիրառվել նաև ֆինանսական առողջացումից դուրս՝ այլ ընթացակարգերով, օրինակ՝

✓ Օրենքի 18-րդ հոդվածը նախատեսում է, որ կողմերը սնանկության դիմումը հետ վերցնելու համար սահմանված ժամկետում կարող են կնքել հաշտության համաձայնություն: Հաշտության համաձայնությունը, որպես գործարք, ըստ էութե-

²⁸ St' u Несостоятельность (банкротство): Учебный курс. В 2 т. / Под ред. д.ю.н., проф. **С.А. Карелиной**. Т. 1. – М.: Статут, 2019, էջ 618:

յան, կարող է ուղղված լինել հենց նույն պարտքի մարման նոր ժամանակացույցի սահմանմանը:

✓ Հարկային մարմինը պարտապանի հետ կարող է կնքել իր հարկային պարտավորությունների աստիճանական մարման ժամանակացույցը՝ ՀՀ հարկային օրենսգրքի²⁹ հիման վրա: Ընդ որում՝ հարկ է նկատի ունենալ, որ Օրենքի փոփոխություններով, մասնավորապես՝ 39-րդ հոդվածի 3-րդ մասում կատարված փոփոխությամբ, սահմանվել է, որ մորատորիումի գործողությունը չի տարածվում պարտապանի կողմից իր հարկային պարտավորությունների աստիճանական մարման ժամանակացույցի կնքման գործընթացի նկատմամբ, եթե սնանկության վարույթի միակ պարտատերը հարկային մարմինն է:

✓ Նոր վարկի ստացումը, որի հնարավորությունը նախատեսվել է Օրենքի փոփոխությունների արդյունքում: Խոսքը գնում է պարտապանի նախաֆինանսավորման մասին, այսինքն՝ ֆինանսավորումը՝ մինչև ֆինանսական առողջացման ծրագրի քննարկումը: Բանն այն է, որ միջազգային լավագույն փորձը վկայում է այն մասին, որ պարտապանը պետք է հնարավորություն ունենա ստանձնելու նոր ֆինանսական պարտավորություններ նաև մինչև առողջանալու կամ լուծարվելու մասին որոշում կայացնելը. դա բխում է նաև Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելը» (Doing business) մեթոդոլոգիայից, որը որպես լավագույն օրենսդրության չափանիշ պահանջում է, որ օրենքը հնարավորություն տա ստանձնելու նման պարտավորություններ (post-

²⁹ Ընդունվել է 04.10.2016թ.: Ուժի մեջ է մտել 01.01.2018թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2016.11.04/79(1259), Հոդ.1038:

commencement credit)³⁰: Նման մեխանիզմի նպատակն է հնարավորություն տալ պարտապանին պահպանել իր գոյությունը, հոգալ ընթացիկ ծախսերը մինչև ֆինանսական առողջացման հարցի քննարկումը:

Այս առումով Օրենքի 40-րդ հոդվածի 3.1-ին մասը սահմանում է, որ դատարանը կարող է թույլատրել պարտապանին ստանձնելու նոր ֆինանսական պարտավորություններ՝

✓ մինչև պարտատերերի պահանջների վերջնական ցուցակի հաստատումը՝ կառավարչի, պարտատիրոջ կամ պարտապանի դիմումով.

✓ պահանջների վերջնական ցուցակը հաստատելուց հետո՝ պարտատիրոջ (պարտատերերի ժողովի) համաձայնությամբ:

Կրկին հարկ է շեշտել, որ այս նոր գործիքի շրջանակներում խոսքը վերաբերում է սնանկության վարույթը հարուցելուց հետո և ֆինանսական առողջացումից դուրս ֆինանսական պարտավորություններ ստանձնելուն, ընդ որում, Օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասում կատարված փոփոխությունների ուժով Օրենքի 40-րդ հոդվածի 3.1-ին մասով սահմանված դեպքում պարտապանի ստանձնած պարտավորությունների նկատմամբ մորատորիում չի տարածվում:

Այստեղ կարևոր է նշել նաև, որ այս մեխանիզմը ինքսանպատակ չէ, քանի որ Օրենքի մի շարք կարգավորումներից ենթադրվում է, որ պարտապանին այդ փուլում կարող են անհրաժեշտ լինել որոշակի ֆինանսական միջոցներ մինչև առողջացման հարցի լուծումը: Օրինակ՝ Օրենքի 49-րդ հոդ-

³⁰ Տե՛ս հետևյալ հղմամբ՝

<https://www.doingbusiness.org/en/methodology/resolving-insolvency>:

վածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանին կոմունալ ծառայություններ (էլեկտրաէներգիա, բնական գազ, ջուր, հեռախոսակապ և այլն) մատուցող կազմակերպությունները չեն կարող հրաժարվել, մերժել, դադարեցնել իրենց ծառայությունների մատուցումը պարտապանին դատարանի կողմից նրան սնանկ ճանաչելու պատճառով, եթե պարտապանը սնանկ ճանաչվելուց հետո ժամանակին կատարում է նշված ծառայությունների դիմաց ընթացիկ վճարումները:

Ավելին, Օրենքի փոփոխությունների արդյունքում Օրենքի 49-րդ հոդվածի կարգավորման շրջանակները ընդլայնվել են՝ ներառելով պարտապանի համար կենսական ապրանքների և ծառայությունների մատուցման պայմանագրերի գործողության շարունակականության հարցը: Այսպես՝ Օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կառավարչի պահանջով և դատարանի որոշմամբ պարտապանի գործունեությունը շարունակելու համար կենսական նշանակություն ունեցող ապրանքների և ծառայությունների մատուցմանն ուղղված պայմանագրերը նույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված կարգով չեն ընդգրկվում Օրենքի 15.5-րդ և 39-րդ հոդվածներով նախատեսված սահմանափակումների, այսինքն՝ մորատորիումի ներքո, և դրանցից բխող վճարումները կատարում է կառավարիչը՝ որպես վարչական ծախսեր:

Քննարկվող հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ կառավարիչը պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծության մեջ ներառում է վերը նշված պայմանագրերի մասին տեղեկություններ՝ հիմնավորելով այդ պայմանագրերի՝ պարտապանի համար կենսական նշանակություն ունենալու հանգամանքը և պայմանագրերի օրինակների հետ միասին ներկա-

յացնում է դատարանի հաստատմանը: Դատարանն իր որոշմամբ կարող է հաստատել յուրաքանչյուր պայմանագրի՝ պարտապանի համար կենսական նշանակություն ունենալու հանգամանքը: Դատարանի որոշումը հիմք է այդ պայմանագրերի գործողությունը շարունակելու համար, և հենց այդ ուժով էլ դրանք չեն ընդգրկվում մորատորիումի սահմանափակումների ներքո, չեն լուծվում և դրանց հիման վրա վճարումները շարունակում են կատարվել:

Այս հարցը իրականում կարևոր է հատկապես ֆինանսական առողջացման հարցի քննարկման ժամանակ, քանի որ նման պայմանագրերի առկայությունը և դատարանի որոշմամբ դրանց գործողության շարունակականությունն ապահովելը ենթադրում է, որ այդ պայմանագրերին հատուկ անդրադարձ պետք է կատարվի ֆինանսական առողջացման ծրագրի շրջանակներում, քանի որ դրանք բոլոր դեպքերում չեն կորցնում իրենց կենսական նշանակություն ունենալու հանգամանքը: Ավելին՝ ֆինանսական առողջացման ծրագիրը պետք է կառուցվի՝ հիմք ընդունելով նաև պարտապանի գործունեության խիստ կախվածությունը նման ծառայություններից ու ապրանքներից, և դրանց հատուկ ուշադրություն տրվի ֆինանսական առողջացման ծրագրի միջոցառումների շրջանակներում: Ընդ որում, եթե ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված լինեն այնպիսի դրույթներ, որոնք կարող են բացասաբար ազդել նման ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման վրա, ապա սա կարևոր ազդակ կարող է լինել նման ծրագրերն առավել խիստ դիտարկելու համար, քանի որ, ի վերջո, կարող է հակասություն առաջանալ դատարանի որոշման՝ որպես նման

պայմանագրերի գործողության շարունակականության ապահովման միջոցի և ֆինանսական առողջացման ծրագրի միջև, եթե, իհարկե, մինչ այդ նման պայմանագրերը պարտապանի նախաձեռնությամբ չեն լուծվել: Սա կարող է վկայել պարտապանի՝ լուծարման գնալու նախատրամադրության մասին: Այսինքն՝ ամեն դեպքում այս հարցերի և ֆինանսական առողջացման ծրագրի հարաբերակցության հարցը պետք է գնահատման առարկա հանդիսանա՝ ելնելով կոնկրետ գործի հանգամանքներից, պարտապանի ֆինանսական դրությունից, սնանկության վարույթի հարուցումից հետո պարտապանի գործունեության արդյունավետությունից և այլն:

§ 4. Ֆինանսական առողջացման ծրագրի ներկայացումը

«-ում սնանկության մոդելը կառուցված է այնպես, որ դատարանը ֆինանսական առողջացման գործընթացում հնարավորինս քիչ մասնակցություն ունի: Ասվածի մասին է վկայում այն հանգամանքը, որ դատարանը ֆինանսական առողջացման ծրագրի փաստացի ընդունման հարցում որևէ բովանդակային մասնակցություն չի ունենում, այլ միայն հաստատում է նման ծրագրի օրինականությունը:

Ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացնելը, ըստ էության, առաջարկ (օֆերտա) է, որը որոշակի պարտադիր պարտավորություններ է առաջացնում նման ծրագիր ներկայացնողի համար, և նման առաջարկը պարտատերերի ժողովի մասնակիցները ընդունում են իրենց ռիսկով (ակցեպտ)³¹:

Ֆինանսական առողջացման ծրագրի ներկայացման հետ կապված հարցերը կարգավորված են Օրենքի 60-րդ հոդվածով, որը նախատեսում է՝

- ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը,
- ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացնելու ժամկետը:

Ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտները: Օրենքը սահմանում է, որ ֆինանսական առողջացման ծրագիր կարող են ներկայացնել՝

³¹ Տե՛ս «Անվճարունակության (սնանկության) մասին» «- օրենքի մեկնաբանություններ, էջ 93 (հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://www.hmanoukian.com/files/old/210.pdf>):

- պարտապանի կանոնադրական (բաժնետեղալաք, փայտալաք) կապիտալի առնվազն 1/3-ին տիրապետող անձինք,

- չապահովված պահանջների առնվազն 1/3-ին տիրապետող պարտատերերը,

- ապահովված պահանջների առնվազն 1/3-ին տիրապետող պարտատերերը,

- կառավարիչը,

- պարտապանը:

Վերոնշյալ անձինք, փաստորեն, շահագրգռված լինելով պահպանել պարտապանի տնտեսական գործունեությունն ու բիզնեսը, պարտատերերին առաջարկում են որոշակի զիջումների գնալ և հնարավորություն տալ, որ պարտապանը վերականգնի իր վճարունակությունը³²:

Այստեղ հատկանշական է, որ Օրենքը ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացնելու իրավունքով օժտել է միաժամանակ և՛ պարտապանին, և՛ պարտապանի կանոնադրական (բաժնետեղալաք, փայտալաք) կապիտալի առնվազն 1/3-ին տիրապետող անձանց: Սա, ըստ էության, նպատակ ունի առավել ընդլայնել ֆինանսական առողջացման հնարավորությունները, քանի որ պարտապանի անունից ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացնելը ենթադրելու է կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման առավել բարձր շեմ, ինչին շատ դեպքերում հնարավոր չէ հասնել՝ կառավարման մարմիններում ընդգրկված անձանց, այդ թվում՝ դրանցում ընդգրկված՝ պարտապանի մաս-

³² St' u Несостоятельность (банкротство): Учебный курс. В 2 т. / Под ред. д.ю.н., проф. **С.А. Карелиной**. Т. 1. – М.: Статут, 2019, էջ 619:

նակիցների կամ բաժնետերերի այս կամ այն շահերից ելնելով, իսկ պարտապանի կանոնադրական (բաժնեհավաք, փայտահավաք) կապիտալի առնվազն 1/3-ին տիրապետող անձանց նման հնարավորություն տալը ենթադրում է, որ այդ սուբյեկտները, անկախ պարտապան կազմակերպության կողմից նման որոշում կայացնելուց, կարող են ինքնուրույն նախաձեռնել պարտապանի առողջացման գործընթաց:

Հետաքրքրական է, որ, օրինակ, ՌԴ օրենսդրությունը և՛ պարտապանի մասնակիցների (հիմնադիրների), և՛ նրա գույքի սեփականատերերի կողմից առողջացում նախաձեռնելու հնարավորություն է ընձեռում: Սակայն օրենքը, հատուկ սահմանելով ընկերության մասնակիցների և հիմնադիրների՝ համապատասխան միջնորդություն ներկայացնելու հատուկ կանոնները, պարտապանի համար նման հատուկ կանոններ չի նախատեսել: Սա բացատրվում է նրանով, որ պարտապանի կողմից նման միջնորդություն ներկայացնելն այս փուլում արդիական չի լինում, քանի որ դատարանը պարտապանին սնանկ ճանաչելով արդեն իսկ հաստատում է պարտապանի անվճարունակության հանգամանքը, ինչը արդեն իսկ հավաստում է, որ պարտապանը ի վիճակի չէ ինքնուրույն կարգավորել իր դրամային պարտավորությունները պարտատերերի հետ³³:

Պարտատերերի կողմից ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացնելու հարցի առնչությամբ հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ Օրենքը նման իրավունքով օժտում է ապահովված կամ չապահովված պարտատերերին:

³³ St'u Несостоятельность (банкротство): Учебный курс. В 2 т. / Под ред. д.ю.н., проф. **С. А. Карелиной**. Т. 1. – М.: Статут, 2019, էջ 620:

հանջների առնվազն 1/3-ին տիրապետող պարտատերերին: Սա ենթադրում է, որ մյուս պարտատերերը, որոնք ֆինանսական առողջացման ծրագրի ներկայացմանը չեն մասնակցել, պետք է ստանան համապատասխան երաշխիքներ՝ ելնելով սնանկության վարույթում պարտատերերի շահերի հավասարակշռման սկզբունքից: Այս առումով Օրենքի 61-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ առանց պարտատիրոջ գրավոր համաձայնության, ֆինանսական առողջացման ծրագիրը չի կարող նախատեսել այդ պարտատիրոջ պահանջների բավարարման այլ հերթականություն, քան նախատեսված է Օրենքով: Ընդ որում, անկախ ամեն ինչից, պարտատերերից որևէ մեկը չպետք է ֆինանսական առողջացման ծրագրի նախատեսված արդյունքում նվազ նպաստավոր պայմաններում հայտնվի, քան եթե պարտապանը լուծարվեր, եթե, իհարկե, տվյալ պարտատերը գրավոր այլ համաձայնություն չի տալիս, օրինակ՝ պահանջների նվազեցման կամ հրաժարման վերաբերյալ:

Առանձնահատուկ քննարկման կարիք ունի կառավարչի կողմից ֆինանսական առողջացման ծրագրի ներկայացման հարցը, քանի որ չնայած օրենսդիրը այն ձևակերպել է իրավունքի ձևաչափով, այնուամենայնիվ, ելնելով կառավարչի կարգավիճակից և դերակատարումից, այս իրավունքը ենթադրում է իրացման պարտադիրության տարր այն բոլոր դեպքերում, երբ պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծության արդյունքում արձանագրվում է պարտապանի ֆինանսական առողջացման որոշակի հնարավորություն:

Ապահովված պարտատերերի իրավունքների երաշխավորումը ֆինանսական առողջացման ծրագիր ներկա-

յացնելիս: Հաջորդ կարևոր հանգամանքը, որ նախատեսված է ֆինանսական առողջացման ծրագրի ներկայացման շրջանակներում, ապահովված պարտատերերի իրավունքների երաշխավորումն է: Մասնավորապես, Օրենքի 61-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ եթե ֆինանսական առողջացման ծրագրի իրականացման ընթացքում պետք է օգտագործվի ապահովված պարտատիրոջ (պարտատերերի) պահանջի դիմաց գրավադրված գույքը, ապա ապահովված պարտատիրոջ (պարտատերերի) համաձայնությունը ֆինանսական առողջացման ծրագրի քննարկման կամ հաստատման համար պարտադիր է:

Հիշյալ կարգավորումը անհրաժեշտ է քննարկել ամերիկյան մոդելից³⁴ փոխառված՝ համարժեք պաշտպանության ինստիտուտի շրջանակներում: Այսպես՝ Օրենքի 41-րդ հոդվածը սահմանում է, որ համարժեք պաշտպանությունը տրվում է այն դեպքերում, երբ ֆինանսական առողջացման ծրագրի կամ պարտապանի գործունեության վերսկսման շրջանակներում անհրաժեշտություն է առաջանում օգտագործելու ապահովված պարտատիրոջ՝ ապահովված իրավունքի առարկա գույքը:

Համարժեք պաշտպանությունը ֆինանսական առողջացման ծրագրի գործողության կամ մորատորիումի ընթացքում որոշակի գործողությունների կատարման թույլատրումն է,

³⁴ Մանրամասն տե՛ս 11 U.S. Code § 361. Adequate protection (հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.law.cornell.edu/uscode/text/11/361>), “Adequate Protection and The Automatic Stay Under The Bankruptcy Code: Easing Restraints On Debtor Reorganization” (հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://scholarship.law.upenn.edu/cgi/viewcontent.cgi?article=4662&context=penn_law_review):

որն ուղղված է Օրենքով նախատեսված դեպքերում ապահովված պարտատիրոջ՝ պահանջի դիմաց գրավադրված գույքի արժեզրկման արդյունքում պահանջի ապահովվածության պահպանմանը: Այն, ըստ էության, այնպիսի գործողություն է, որը կարող է իրականացվել ցանկացած այնպիսի եղանակով, որի արդյունքում կապահովվի ապահովված պարտատիրոջ շահերի պաշտպանությունը, երբ վերջինիս ապահովված իրավունքի առարկան օգտագործվելու է ֆինանսական առողջացման ծրագրի շրջանակներում:

Օրենքը, համարժեք պաշտպանության ձևերի սպառիչ ցանկ չի սահմանում՝ թույլ տալով ցանկացած եղանակով այն տրամադրելու հնարավորություն՝ միաժամանակ նախատեսելով մի քանի նման եղանակներ, մասնավորապես՝

- կառավարչի կողմից իրականացվող կանխիկ վճարումներ՝ գույքի արժեզրկման չափով,
- պարտապանի ապահովված իրավունքի առարկա գույքի ավելացում կամ առավել արժեքավոր գույքով փոխարինում,
- պարտատիրոջ ապահովված պահանջների ամբողջական բավարարում՝ գույքի հնարավոր իրացման գնի ամբողջ մասով (առանց գույքի պահպանման և այլ վարչական ծախսերի վճարման):

Ամեն դեպքում, համարժեք պաշտպանություն տրամադրելու կոնկրետ եղանակի ընտրությունը, ի թիվս այլնի, կախված է նրանից, թե՛

- ✓ որքան մեծ է գույքի արժեզրկման ռիսկը,
- ✓ ինչ ուղղություններով է օգտագործվելու գույքը
- ✓ պարտապանը հնարավոր ինչ եղանակներ է ի վիճակի

առաջարկել³⁵:

Համարժեք պաշտպանության ինստիտուտը, փաստորեն, երաշխավորում է ոչ միայն ապահովված պարտատերերի պայմանագրային իրավունքը՝ լիարժեք վստահելու իրենց ապահովման միջոցին, այլ նաև նրանց գույքային իրավունքները՝ գրավի առարկան օգտագործելու մասով: Դրանով իսկ համարժեք պաշտպանության հետևանքով ապահովված պարտատիրոջ իրավունքները բախվում են պարտապանի ֆինանսական առողջացման նպատակների հետ: Ընդ որում՝ Օրենքի ողջ տրամաբանությունը ցույց է տալիս, որ այս «պայքարում», ամեն դեպքում, առավելություն ունեն ապահովված պարտատերերը: Հետաքրքրական է, որ համարժեք պաշտպանության՝ Օրենքով նախատեսված եղանակները վկայում են, որ համարժեք պաշտպանություն տրամադրելու դեպքում ապահովված պարտատերն ի վերջո լրիվ փոխհատուցում է ստանում. մի դեպքում՝ գույքի արժեզրկման չափով դրամական միջոցների, մյուս դեպքում՝ համարժեք գույքի ձևով, մեկ այլ դեպքում՝ պահանջի լրիվ բավարարմամբ:

Ամերիկյան դոկտորինում նշվում է, որ սա կարող է խնդրահարույց լինել պարտապանների համար: Օրինակ՝ պարտապանին բոլոր ապահովված պարտատերերին վճարումներ կատարելու պահանջ ներկայացնելը կարող է հանգեցնել առկա կանխիկ միջոցների զրոյացմանը, այնինչ ֆինանսական առողջացմանը դիմող պարտապանը բնական է՝

³⁵ Տե՛ս What Every Secured Creditor (and Its Lawyer) Should Know About Chapter 11, Journal Issue: Nov 2003 Column Name: Chapter 11 - “101” (հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.abi.org/abi-journal/what-every-secured-creditor-and-its-lawyer-should-know-about-chapter-11>):

չունի բավարար դրամական միջոցներ և ցանկանում է պարտքի վերակառուցման միջոցով կայունացնել իրավիճակը: Եվ եթե պարտապանը չկարողանա կատարել համարժեք պաշտպանության շրջանակներում կատարվող վճարումները, նա կկորցնի այն կարևոր նշանակություն ունեցող գույքը, որն անհրաժեշտ է ֆինանսական առողջացման համար: Այս պարագայում ապահովված պարտատերը ավելի շուտ շահագրգռված կլինի ընդունելու համարժեք պաշտպանությունը, քան ջանք կգործադրի՝ ներկայացնելու ֆինանսական առողջացման ծրագիր, քանի որ մորատորիումի պայմաններում համարժեք պաշտպանություն ստանալով՝ նման պարտատերը առավել քան պաշտպանված կլինի և լիարժեք փոխհատուցված՝ անկախ նրանից, թե ինչ ճակատագիր կունենա պարտապանը³⁶: Ասվածը, ամեն դեպքում, վկայում է այն մասին, որ նախ՝ ապահովված պարտատերերը գերպաշտպանված են սնանկության վարույթում և երկրորդ՝ համարժեք պաշտպանության չարաշահումը կարող է ի չիք դարձնել մորատորիումի ազդեցությունը:

Հարկ է նկատի ունենալ նաև, որ համարժեք պաշտպանությունը չպետք է կիրառվի ի վնաս ապահովված պարտատիրոջ: Որքան էլ ֆինանսական առողջացման ծրագիրը, ապահովվելով նաև պարտատերերի շահերի հավասարակշռումը, ուղղված է պարտապանի վճարունակության վերականգմանը, գաղտնիք չէ, որ ապահովված պարտատերերը

³⁶ Տե՛ս “Adequate Protection and The Automatic Stay Under The Bankruptcy Code: Easing Restraints On Debtor Reorganization”, էջ 429-433 (հասանելի է հետևյալ հղմամբ՝

https://scholarship.law.upenn.edu/cgi/viewcontent.cgi?article=4662&context=penn_law_review):

այս կամ այն հարցում միշտ առավել շահեկան դիրքում են հայտնվում և առավել պաշտպանված են: Դա հավասարապես վերաբերում է նաև այս դեպքերին. համարժեք պաշտպանությունը պետք է կիրառվի բոլոր կողմերի շահերի համակողմանի գնահատման արդյունքում և լավ հիմնավորված լինելու պարագայում, դրա շրջանակներում տրվող պաշտպանության երաշխիքները պետք է լինեն իրատեսական, վստահելի, համարժեք, հաշվարկված, այլապես ապահովված իրավունքի առարկան, թեկուզև բարեխղճորեն օգտագործվելով ֆինանսական առողջացման ծրագրում՝ առողջացման նպատակներով, կարող է էապես արժեզրկվել և այլևս պիտանի չլինել ապահովված պարտատիրոջ պահանջի ապահովման համար: Դատարանը համարժեք պաշտպանություն տրամադրելիս պետք է հաշվի առնի ոչ միայն պարտապանի և պարտատիրոջ, այլ նաև պարտապանի աշխատողների շահերը, հանրային շահերը՝ պետական բյուջեի նկատմամբ պահանջների կատարման առումով, պարտապանի գործունեության ոլորտում մրցակցության ապահովման շահերը³⁷:

Խոսելով համարժեք պաշտպանության տրամադրման դատավարական կարգի մասին՝ պետք է նշել, որ համարժեք պաշտպանությունը տրամադրվում է դրա վերաբերյալ դիմումի ներկայացման և դատարանի կողմից դրա քննարկման արդյունքում: Մասնավորապես՝

- համարժեք պաշտպանություն տալու մասին դիմումը ստանալու հաջորդ օրը դատարանը դիմումի պատճենն ուղարկում է պարտապանին,
- դիմումի պատճենը ստանալուն հաջորդող 7 օրվա ըն-

³⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 427:

թացքում պարտապանը կարող է գրավոր վիճարկել դիմումը,

- եթե պարտապանը սահմանված ժամկետում չի վիճարկում ներկայացված դիմումը, ապա ութերորդ օրը դատավորն առանց դատական նիստ հրավիրելու որոշում է կայացնում համարժեք պաշտպանություն տալու մասին,

- սահմանված ժամկետում գրավոր առարկություն ներկայացվելու դեպքում առարկությունը ստանալու հաջորդ օրը հրավիրվում է դատական նիստ, որի ժամանակի և վայրի մասին պատշաճ ձևով ծանուցվում են դիմում ներկայացրած անձը և պարտապանը:

Առարկությունների քննարկման արդյունքում նույն օրը դատարանը որոշում է կայացնում համարժեք պաշտպանություն տալու կամ տալը մերժելու մասին:

Հարկ է նկատել, որ Օրենքը որպես համարժեք պաշտպանություն տրամադրելու նախապայման է սահմանում կառավարչի կատարած վարչական ծախսերի ամբողջական վճարման անհրաժեշտությունը: Սա ենթադրում է, որ համարժեք պաշտպանություն տրամադրելու մասին դիմումին կից, բացի համարժեք պաշտպանություն տրամադրելուն ուղղված անհրաժեշտ փաստաթղթերից, օրինակ՝ պայմանագրերից, պետք է ներկայացվեն նաև ապացույցներ կառավարչի վարչական ծախսերի ամբողջական վճարման վերաբերյալ: Այս պահանջից բացառություն է նախատեսված միայն այն դեպքերի համար, երբ որպես համարժեք պաշտպանության տրամադրման ձև, ամբողջական բավարարում է տրվում պարտատիրոջ ապահովված պահանջին:

Կարևոր է ընդգծել, որ ֆինանսական առողջացման ծրագրում ապահովված իրավունքի առարկան օգտագործելու

համար համարժեք պաշտպանությունը տրամադրվում է մինչև ֆինանսական առողջացման ծրագրին հավանություն տալու հարցի քննարկումը: Այնուամենայնիվ, որքան էլ համարժեք պաշտպանության ինստիտուտն ուղղված լինի ապահովված պարտատերերի իրավունքների երաշխավորմանը, այն որոշակի խնդիրներ կարող է ստեղծել ֆինանսական առողջացման ծրագրերի ընդունման առումով: Բանն այն է, որ օրենքը ֆինանսական առողջացման ծրագրի ընդունումը և հաջող իրագործումը, ըստ էության, կախվածության մեջ է դնում ապահովված պարտատերերի կամքից, քանի որ շատ դեպքերում ֆինանսական առողջացման ծրագրի հաջողությունը կախված է գրավի առարկան առողջացման ծրագրի շրջանակներում ներառելու հնարավորությունից: Մասնավորապես, ներկա օրենսդրությամբ և՛ ապահովված պարտատիրոջ կողմից ապահովված իրավունքի առարկան սնանկության վարույթից դուրս բերելու պարզ ընթացակարգով, և՛ համարժեք պաշտպանության մեխանիզմի՝ բացառապես պարտատիրոջ կամքով պայմանավորելու արդյունքում ֆինանսական առողջացման ծրագրի ճակատագիրը կախված է մնում նման պարտատերերից, իսկ դատարանը չունի լծակներ հաղթահարելու նման խոչընդոտները:

Պետք է նշել, որ այս առումով միջազգային փորձը վկայում է այն մասին, որ դատարանը նախ բավականին ուժեղ լծակներ ունի ապահովված իրավունքի առարկան սնանկության վարույթում պահելու և ֆինանսական առողջացման ծրագրի շրջանակներում օգտագործելու, իսկ որոշ դեպքերում նաև պարտապանի պարտադիր առողջացման գործընթաց սկսելու առումով, ինչպես, օրինակ, Ռուսաստանի Դաշնությունում:

Ուշագրավ է, որ, փորձելով միջազգային լավագույն փորձը ներդնել ՀՀ օրենսդրության մեջ, Օրենքի փոփոխությունների նախագծի նախնական տարբերակում նախատեսվել էին առավել ուժեղ լծակներ դատարանի համար՝ ապահովված իրավունքի առարկան մորատորիումի գործողության ներքո թողնելու առումով, սակայն նախագծի լրամշակման արդյունքում այդ դրույթները հանվեցին՝ հետագա փոփոխություններում դրանց կրկին անդրադառնալու ակնկալիքով: Ուստի այս համատեքստում օրենսդրական կարգավորումների վերանայման կարիքը դեռևս արդիական պետք է համարել:

Ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացնելու ժամկետը: Օրենքը սահմանում է, որ ֆինանսական առողջացման ծրագիրը պետք է ներկայացվի մինչև պարտատերերի առաջին ժողովը: Ընդ որում՝ ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացնելու իրավունք ունեցող անձի միջնորդությամբ դատարանը կարող է երկարաձգել ծրագրի ներկայացման ժամկետը ևս 30 օրով:

Հետաքրքրական կարող է լինել այն հարցի քննարկումը, թե արդյոք այս ժամկետը բացարձակ բնույթ է կրում, թե ոչ: Նկատի ունենք՝ եթե օրինակ ֆինանսական առողջացման գնալու նախադրյալները առաջանում են նաև հետո, օրինակ՝ լուծարման փուլում, հնարավոր է արդյոք այդ փուլում ներկայացնել ֆինանսական առողջացման ծրագիր, թե ոչ, եթե, օրինակ, նոր ներդրող է ի հայտ եկել: Խոսքը այս դեպքում վերաբերում է բուն ֆինանսական առողջացման ընթացակարգով պարտապանի առողջանալուն, քանի որ պարտապանի լուծարման գործընթացում ևս առկա է պարտապանի, ըստ էութ-

յան, առողջանալու հնարավորությունը, այդ թվում՝ նաև Օրենքի 73-րդ հոդվածի շրջանակներում, երբ պարտապանի գործունեությունը կասեցված է լինում Օրենքի 72-րդ հոդվածով նախատեսված կարգով, և կառավարչի միջնորդության հիման վրա կայացված դատարանի որոշմամբ պարտապանը ամբողջությամբ կամ մասնակիորեն վերսկսում է իր գործունեությունը մինչև մեկ տարի ժամանակով, եթե պարտապանի գործունեության վերսկսումը կարող է ավելացնել պարտատերերի պահանջների բավարարման հնարավորությունը: Արդյունքում պարտատերերի պահանջները կարող են բավարարվել նաև այս ընթացակարգով, և լուծարման վարույթը դադարեցվում է Օրենքի 74-րդ հոդվածով սահմանված կարգով:

Սակայն, ինչպես նշվեց, այլ հարց է, երբ լուծարման ընթացքում անհրաժեշտ է կիրառել բուն ֆինանսական առողջացման ընթացակարգը՝ ծրագրի ներկայացման, քննարկման, ընդունման, հաստատման և դրա միջոցառումների կիրառման միջոցով: Այս առումով կարող են քննարկվել մի քանի հարցեր՝

- Արդյո՞ք լուծարման գործընթաց սկսելը անդառնալի երևույթ է և բացառում է դրա ընթացքում ֆինանսական առողջացման ծրագրի ներկայացման հնարավորությունը:

- Արդյո՞ք Օրենքը նախատեսել է ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացնելու բաց թողնված դատավարական ժամկետի վերականգնման հնարավորություն, թե ոչ:

Դատական պրակտիկայում վերոնշյալ հարցերի առնչությամբ քննարկման արժանի մեկնաբանություններ արդեն տրվել են: Մասնավորապես, Օրենքի 60-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետը, որը վերաբերում է ֆի-

նանսական առողջացման ծրագիր ներկայացնելուն, իր բնույթով դիտարկվել է որպես դատավարական ժամկետ, քանի որ դրանով կարգավորվում է ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացնելու ընթացակարգը և, ըստ էության, կարծես տեսականորեն հնարավոր է համարվել նման դատավարական ժամկետի բացթողումը հարգելի համարելը: Սակայն, միևնույն ժամանակ, նշվել է, որ պարտապանը, գտնվելով լուծարման գործընթացում և կորցնելով պետության կողմից ճանաչված իրավունակությունը, չի կարող վերականգնել այն ֆինանսական առողջացման եղանակով, քանի որ նման գործընթացի իրականացումը բացառվում է օրենսդրության վերոնշյալ տրամաբանությունից և նպատակներից ելնելով³⁸:

Այսինքն՝ ելնելով սնանկության վարույթի էությունից և օրենսդրական նորմերի վերլուծությունից՝ կարելի է պնդել, որ՝

- սնանկության վարույթի սուբյեկտների համար սահմանված է ժամկետ՝ նախանշելու առողջացման հնարավորությունները և ներկայացնելու ֆինանսական առողջացման ծրագիր,

- նշված դեպքում սահմանված դատավարական ժամկետը վերականգնելու հնարավորություն նախատեսված չէ,

- այդ ժամկետի նախատեսումը ինքնանպատակ չէ, քանի որ ուղղված է պարտապանի հետագա ճակատագիրը արագ պարզելուն՝ առողջացմանը կամ լուծարմանը,

- լուծարման վարույթ սկսելը իրենից ենթադրում է այնպիսի գործողությունների կատարում, որոնց արդյունքները

³⁸ Տե՛ս, օրինակ, Վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ ԱՎԴ/0008/04/15 սնանկության գործով 13.11.2018թ. որոշումը:

հետագայում անհնար է շրջադարձել՝ գույքի իրացում, պարտապանի գործունեության կասեցում և այլն,

- պարտապանին լուծարային վարույթում «առողջացնել» հնարավոր է նաև այլ եղանակներով, օրինակ՝ պարտավորությունների մարում, ազատում և այլն:

§ 5. Ֆինանսական առողջացման ծրագրի քննարկումը և հաստատումը

Օրենքի ընդհանուր վերլուծությունը ցույց է տալիս, որ լայն իմաստով ֆինանսական առողջացման ծրագրի քննարկումն ընդգրկում է հետևյալ փուլերը՝

- ծրագրի նախնական քննարկում դատարանում,
- ծրագրի քվեարկություն և ընդունում պարտատերերի ժողովի կողմից,
- ծրագրի հաստատում դատարանի կողմից:

Ֆինանսական առողջացման ծրագրի նախնական քննարկումը դատարանում: Օրենքի ուժով ֆինանսական առողջացման ծրագրի քվեարկությունն ու ընդունումն իրականացվում է պարտատերերի ժողովում: Սակայն նախքան պարտատերերի ժողովի հրավիրումը և ծրագրի քվեարկությունն այն, այսպես ասած, քննարկվում է դատարանի կողմից: Այս փուլում գործում է ֆինանսական առողջացման ծրագրի իրավաչափության կանխավարկածը և այն կանխավարկածը, որ դատարան ներկայացված ֆինանսական առողջացման ծրագիրը կարող է ներկայացվել պարտատերերի ժողովի քվեարկությանը, եթե դատարանը այն առանց քննարկման չի թողել: Ընդ որում՝ այս փուլում դատարանը քննարկման առարկա է դարձնում միայն Օրենքի պահանջներին համապատասխանության հարցը: Այսինքն՝ ֆինանսական առողջացման ծրագիրը այս փուլում քննարկելու, հաստատելու, թույլատրելու պահանջ և այդ առնչությամբ որոշում ընդունելու անհրաժեշտություն առկա չէ: Սակայն Օրենքով նախատեսված է ծրագիրն առանց քննարկման թողնելու հնարավորութ-

յունը, որը որոշելու հարցը վերապահված է դատարանին և իրականացվում է ֆինանսական առողջացման ծրագիրը ստանալուց հետո երկու օրվա ընթացքում: Մասնավորապես, դատարանը նման որոշում է ընդունում, եթե ֆինանսական առողջացման ծրագիրը չի համապատասխանում Օրենքով սահմանված պահանջներին:

Այս հարցի քննարկման փուլում դատարանին վերապահված է նաև հնարավորություն՝ ծրագիր ներկայացնող անձից պահանջելու ներկայացնել ծրագրի վերաբերյալ փորձագետի եզրակացություն³⁹:

Այն դեպքում, երբ դատարանը որոշում չի ընդունում ֆինանսական առողջացման ծրագիրն առանց քննարկման թողնելու մասին, ապա ծրագրի քննարկումը անցնում է պարտատերերի ժողովին:

Ֆինանսական առողջացման ծրագրի քննարկումը պարտատերերի ժողովում: Երբ դատարանը որոշում չի ընդունում ֆինանսական առողջացման ծրագիրն առանց քննարկման թողնելու մասին, ապա կառավարիչը, պարտապանը և հայտնի բոլոր պարտատերերը ծանուցվում են դատարանում ֆինանսական առողջացման ծրագրի առկայության և ծրագրին նրանց ծանոթանալու իրավունքի մասին: Նշվածից հետո կառավարիչը հրավիրում է պարտատերերի ժողով ֆինանսական առողջացման ծրագիրը քննարկելու նպատակով: Նման մոտեցման համար հիմք է ընդունվում այն հանգամանքը, որ բոլոր կողմերը, ում շահերին առնչվում

³⁹ Օրենսդիրը չի հստակեցրել փորձաքննության տեսակը, սակայն, ելնելով ֆինանսական առողջացման բնույթից, նման փորձաքննությունը պետք է տնտեսագիտական լինի:

է ծրագիրը, պետք է մասնակցեն և քվեարկեն, որի համար կարևոր նախապայման է պարտատերերի ժողովի հրավիրման մասին ծանուցումը, որն իրականացվում է իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում՝ նշելով ծրագիրը (ծրագրերը) ներկայացնողի անունը (անվանումը) և ժողովի հրավիրման տարին, ամիսը, ամսաթիվը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ առանձին դեպքերում նախատեսվում է նաև պարտատերերին անհատապես ծանուցելու մեխանիզմ, որը ենթադրում է նաև առաջարկվող նախագծի պատճենը ուղարկելու պարտականություն: Ինչպես ՀՀ օրենսդրությամբ, այնպես էլ մյուս երկրներում ընդունված է ծանուցումն ապահովել ամսագրերում, թերթերում կամ առցանց հրապարակումների միջոցով⁴⁰:

Ինչպես նշվեց, ֆինանսական առողջացման ծրագիրը ներկայացվում է մինչև պարտատերերի առաջին ժողովը, իսկ դատարանի կողմից ֆինանսական առողջացման ծրագիրը քննարկվելուց և առանց քննարկման թողնելու մասին որոշում չկայացվելուց հետո ամենաուշը քսան օր հետո պետք է հրավիրվի պարտատերերի ժողով՝ ֆինանսական առողջացման ծրագիրը քննարկելու նպատակով: Եթե հաշվարկելու լինենք այն առավելագույն ժամկետները, որոնց ընթացքում ֆինանսական առողջացման ծրագիրը քննարկելու համար պետք է հրավիրվի պարտատերերի ժողովը, ապա ստացվում է հետևյալը՝

✓ պարտատերերի առաջին ժողովը նշանակվում է պա-

⁴⁰ St' u Rescue of Business in Insolvency law, Instrument of the European Law Institute, 2017, էջ 314:

հանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշումը կայացնելու օրվանից ոչ ուշ, քան 40 օրվա և ոչ շուտ, քան 30 օրվա ընթացքում,

✓ մինչև այդ ժամկետը պետք է ներկայացվի ֆինանսական առողջացման ծրագիրը,

✓ ծրագիրը պետք է «քննարկվի» դատարանում երկու օրվա ընթացքում, որից հետո՝ 20 օրվա ընթացքում դրվի պարտատերերի ժողովի քվեարկությանը:

Հարկ է նկատել, որ Օրենքի փոփոխություններով փոփոխվել են պարտատերերի առաջին ժողով նշանակելու ժամկետները: Մասնավորապես, մինչև այս փոփոխությունները Օրենքի 19-րդ հոդվածը սահմանում էր, որ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո դատարանը անհապաղ նշանակում է պարտատերերի առաջին ժողովի անցկացման ժամանակը և վայրը, իսկ ժողովը նշանակվում էր <http://www.azdarar.am> հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ հրապարակման օրվանից ոչ ուշ, քան 80 օրվա և ոչ շուտ, քան 50 օրվա ընթացքում: Օրենքի փոփոխություններով դատարանը պարտատերերի առաջին ժողովի անցկացման ժամանակը և վայրը նշանակում է պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշմամբ, այլ ոչ թե սնանկ ճանաչելու մասին վճռով:

Նման փոփոխությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ երբ դատարանը այդքան վաղ փուլում նշանակում էր պարտատերերի ժողովի անցկացման վայրը և ժամանակը, գործնականում լինում էին դեպքեր, երբ ժողովի անց-

կացման նշանակված օրը դեռևս պահանջների վերջնական ցուցակը հաստատված չէր լինում և արդյունքում պարտատերերի ժողովը անհարկի հետաձգվում էր: Այսինքն՝ ամեն դեպքում, քանի որ պարտատերերի առաջին ժողովի անցկացումը ուղղակիորեն կապված է հաստատված պահանջներով պարտատերերի առկայության հետ, Օրենքի փոփոխություններով պարտատերերի ժողովի նշանակումը պայմանավորվել է պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշմամբ:

Օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մեկից ավելի ֆինանսական առողջացման ծրագրեր քննարկվելու դեպքում բոլոր ծրագրերի քվեարկությունը պետք է կատարվի պարտատերերի մեկ ժողովի ընթացքում: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քվեարկությանը կարող են մասնակցել միայն հաստատված պահանջներով պարտատերերը՝ բացառությամբ.

- ✓ ապահովված պահանջներով պարտատերերի և
- ✓ պարտապանի հիմնադիրների (մասնակիցների, բաժնետերերի, անդամների կամ գործընկերների) պահանջներով պարտատերերի:

Այստեղ կարելի է հատուկ անդրադառնալ ապահովված պարտատերերի մասնակցությունը բացառող դրույթին⁴¹: Բանն այն է, որ ապահովված պարտատերերը, որպես կանոն, հիմնականում չեն առնչվում ֆինանսական առողջաց-

⁴¹ Գաղտնիք չէ, որ գրավի առարկայի արժեքը ապահովված պահանջի չափից փոքր լինելու դեպքում պահանջի չապահովված մասով պարտատիրոջը օրենսդիրը դիտարկել է որպես չապահովված պարտատեր և այդ առումով ապահովված պարտատիրոջ մասնակցությունը բացառող դրույթը կիրառելի չէ:

ման գործընթացին մի քանի հանգամանքներից ելնելով՝

✓ նախ, Օրենքը, որպես կանոն, ինքնին բացառում է առանց ապահովված պարտատիրոջ համաձայնության ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացնելը: Բանն այն է, որ եթե ֆինանսական առողջացման ծրագրի իրականացման ընթացքում պետք է օգտագործվի ապահովված պարտատիրոջ (պարտատերերի) պահանջի դիմաց գրավադրված գույքը, ապա ապահովված պարտատիրոջ (պարտատերերի) համաձայնությունը ֆինանսական առողջացման ծրագրի քննարկման կամ հաստատման համար պարտադիր է:

✓ երկրորդ, Օրենքը, ինչպես արդեն նշվեց, նախատեսում է ապահովված պարտատիրոջը համարժեք պաշտպանություն տրամադրելու հնարավորությունը, եթե վերջինիս ապահովված իրավունքի առարկան պետք է օգտագործվի ֆինանսական առողջացման ծրագրում,

✓ երրորդ, ապահովված պարտատերը բոլոր դեպքերում ունի առաջնային իրավունք՝ դուրս բերելու իր ապահովված իրավունքի առարկան սնանկության վարույթից և իր պահանջները բավարարելու այդ գույքի հաշվին,

✓ անկախ վերոնշյալ դրույթներից՝ ապահովված պարտատիրոջ պահանջն ունի բավարարման երաշխիքներ և այդ առումով ապահովված պարտատերը իրապես շահագրգիռ չէ պարտապանի ֆինանսական առողջացման հարցում, ավելին, շատ դեպքերում հակված է պարտապանի լուծարման տարբերակին՝ սնանկության վարույթում գրավի իրացման եղանակն ընտրելու դեպքում հնարավորինս շուտ դա ապահովելու համար:

Ուստի ենթադրվում է, որ այս պայմաններում ապահով-

ված պարտատիրոջ շահագրգռվածությունը ֆինանսական առողջացման ծրագրերին հասցվում է նվազագույնի, հատկապես այն դեպքերում, երբ ապահովված իրավունքի առարկան չի օգտագործվելու ֆինանսական առողջացման ծրագրում, հակառակ դեպքում, ինչպես նշվեց, պարտատերը, այսպես թե այնպես, հայտնելու է իր դիրքորոշումը ծրագրի վերաբերյալ՝ տալով կամ չտալով գրավոր համաձայնություն կամ համաձայնելով համարժեք պաշտպանություն ստանալուն:

Սակայն գործնականում չեն բացառվում դեպքեր, երբ սնանկության վարույթով բոլոր պարտատերերը լինեն ապահովված պարտատերեր, այդ թվում՝ միակ պարտատերը, և նման պարագայում Օրենքի նախկին խմբագրությամբ բացառվում էր ֆինանսական առողջացման ծրագրերի ընդունումը, քանի որ ապահովված պարտատերերի մասնակցությունը բացառող դրույթը բացարձակ էր և իմպերատիվ: Այնինչ Օրենքի փոփոխություններով նախատեսվել է, որ ֆինանսական առողջացման ծրագիրը քվեարկում են ապահովված պարտատերերը, եթե տվյալ սնանկության գործով բոլոր պարտատերերը ապահովված պարտատերեր են:

Հատուկ ընթացակարգ է նախատեսվում պետական և համայնքային բյուջեների նկատմամբ դրամական պարտավորություններից բխող պահանջներով պարտատերերի՝ ֆինանսական առողջացման ծրագրի քվեարկությանը մասնակցելու մասով: Մասնավորապես, ի տարբերություն նախկին խմբագրությամբ Օրենքի, որը բացառում էր Հայաստանի Հանրապետության պետական և համայնքային բյուջեների նկատմամբ դրամական պարտավորություններից բխող պահանջներով պարտատերերի մասնակցությունը ֆինանսական ա-

առողջացման ծրագրի քվեարկությանը, Օրենքը նախատեսում է նման հնարավորությունը՝ դրանով իսկ նպաստավոր պայմաններ ստեղծելով ֆինանսական առողջացումների համար: Այս կապակցությամբ Օրենքի 63-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է.

✓ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ դրամական պարտավորություններից բխող պահանջներով պարտատերերը ֆինանսական առողջացման ծրագրի քվեարկությանը կարող են մասնակցել Կառավարության սահմանած դեպքերում և կարգով.

✓ Համայնքային բյուջեի նկատմամբ դրամական պարտավորություններից բխող պահանջներով պարտատերերը կարող են մասնակցել ֆինանսական առողջացման ծրագրի քվեարկությանը և կողմ քվեարկել, եթե այդ մասին առկա է համայնքի ավագանու որոշումը:

Վերոնշյալ նորմի հիման վրա Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 10.09.2020թ. ընդունվել է «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ դրամական պարտավորություններից բխող պահանջներով պարտատերերի՝ ֆինանսական առողջացման ծրագրի քվեարկությանը մասնակցելու դեպքերը և կարգը սահմանելու մասին» 1517-Ն որոշումը⁴²: Որոշմամբ սահմանվել են մի շարք դեպքեր, երբ պետական բյուջեի նկատմամբ դրամական պարտավորություններից բխող պահանջներով պարտատերերը կարող են մասնակցել ֆինանսական առողջացման

⁴² Ուժի մեջ է մտել 24.09.2020թ.: Տե՛ս Նորմատիվ իրավական ակտերի հրապարակման միասնական կայքը՝ 2020.09.07-2020.09.20: Պաշտոնական հրապարակման օրը՝ 14.09.2020:

ծրագրերի քվեարկությանը, ի թիվս այլնի, երբ՝

✓ ֆինանսական առողջացման ծրագրի քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցող այլ պարտատեր առկա չէ կամ

✓ ֆինանսական առողջացման ծրագրի քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցող բոլոր պարտատերերը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ դրամական պարտավորություններից բխող պահանջներով պարտատերեր են կամ

✓ պարտապանը համապատասխանում է որոշմամբ սահմանված մի շարք չափանիշներին:

Օրենքի 63-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, թե որ դեպքերում է ֆինանսական առողջացման ծրագիրը համարվում ընդունված: Մասնավորապես, այն ընդունված է համարվում, եթե դրա ընդունման օգտին քվեարկել է պարտատերերի ձայների պարզ մեծամասնությունը, ինչի մասին պարտատերերի ժողովը կայացնում է որոշում:

Հատկանշական է, որ միջազգային լավագույն փորձի համաձայն՝ պարտատերերի ժողովում ֆինանսական առողջացման քվեարկությունը պետք է իրականացվի ըստ պարտատերերի որոշակի դասերի, ընդ որում, այդ դասերը չեն սահմանափակվում զուտ միայն ապահովված, չապահովված, ստորադաս չապահովված պարտատերերի դասերով, ինչպես մեր օրենսդրությունում է, այլ տարբեր երկրներ, հաշվի առնելով պարտատերերի տարբեր կատեգորիաներ, տարբեր դասակարգումներ են իրականացնում, ներառելով նաև, օրինակ, պարտապանի աշխատողներին, պետությանը, այս կամ այն չափի պահանջներին տիրապետող պարտատերերի և այլն:

Նպատակն այն է, որպեսզի որոշակի չափանիշների համապատասխանող, հիմնականում՝ խոցելի պարտատերերը կարողանան ազդեցիկ դեր ունենալ ֆինանսական առողջացման ծրագրերի ընդունման հարցում, քանի որ, ըստ դասերի քվեարկության, հաշվի է առնվում պարտատերերի դասի կողմից տրված ձայնը, այլ ոչ առանձին պարտատերերի, ինչի արդյունքում քիչ քանակի ձայներ ունեցող որոշակի խումբ պարտատերեր կարողանում են որոշիչ ձայն ունենալ:

Նշենք, որ նման մոդելը նախատեսված էր Օրենքի փոփոխությունների նախագծի նախնական տարբերակում, որը, սակայն, շահագրգիռ անձանց հետ քննարկումների արդյունքում հանվեց՝ ելնելով այն մտահոգություններից, որ դրա հետևանքով գործնականում կարող է էլ ավելի դժվարանալ առանց այդ էլ քիչ քանակ կազմող ֆինանսական առողջացման ծրագրերի ընդունումը:

Օրենքն անդրադարձել է նաև ֆինանսական առողջացման ծրագրի ընդունման կարգին այն դեպքում, երբ մեկ սնանկության գործի շրջանակում ներկայացվում են մի քանի ֆինանսական առողջացման ծրագրեր: Այսպես, եթե քվեարկվում են մեկից ավելի ծրագրեր, ապա դրանք քվեարկվում են ըստ ներկայացման առաջնայնության, իսկ արդեն ֆինանսական առողջացման ծրագրի ընդունումից հետո մնացած ծրագրերը չեն քվեարկվում:

Ֆինանսական առողջացման ծրագրի հաստատումը դատարանի կողմից: Ընդհանուր կանոնի համաձայն, եթե նախատեսվում է դատական կարգով ֆինանսական առողջացման ծրագրի հաստատման պահանջ, ապա այդ ընթացակարգը պետք է բավարարի հետևյալ պայմաններին՝

- պետք է օրենքով նախատեսված պատշաճ ընթացակարգի պահպանմամբ ձեռք բերված լինեն անհրաժեշտ թվով ձայներ,

- պարտատերերը պետք է ստանան այնքան, որքան նրանք կստանային պարտապանի լուծարման դեպքում, բացառությամբ այն դեպքերի, երբ վերջիններս համաձայնություն են հայտնում ավելի քիչ ստանալ,

- ծրագրի պայմանները պետք է չհակասեն օրենքին,

- վարչական պահանջներն ու ծախսերը ամբողջությամբ բավարարվում են, բացառությամբ, երբ անձը համաձայն է ավելի քիչ բավարարում ստանալ:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ ոչ բոլոր պետություններն են նախատեսում ֆինանսական առողջացման ծրագրի հաստատման անհրաժեշտությունը նաև դատարանի կողմից, և պարտատերերի՝ օրենքով նախատեսված նվազագույն չափով ձայներ ստացած լինելու հանգամանքը բավարար է, որպեսզի ծրագիրը գնահատվի արդյունավետ, իսկ այն պարտատերերի համար, որոնք չեն ընդունել ծրագիրը, այն պարտադիր է դառնում օրենքի ուժով:

Որոշ երկրներում դատարանները դեռ դերակատարություն ունեն այս հարցում, երբ պարտատերերը կամ պարտապանը վիճարկում են ծրագիրը: Կան նաև համակարգեր, որտեղ դատական վերանայումը կրում է նաև պարտավորեցնող բնույթ⁴³: Դատարանը պետք է ստուգի նյութական և դատավարական բոլոր պահանջները, այդ թվում՝ պատշաճ դասակարգումը և քվեարկությունը, պարտատերերի նկատմամբ

⁴³ St' u Legislative Guide On Insolvency Law, United Nations Commission On International Trade Law, §56, էջ 226:

հավասար մոտեցումը, ծրագրով պարտադիր նվազագույն բաշխումները, սահմանափակումների շրջանակը: Որոշ երկրներում, օրինակ՝ Ավստրիայում, Ֆրանսիայում, Նիդեռլանդներում կամ Լեհաստանում դատարանը ստուգում է նաև հաստատված ծրագրի իրագործելիությունը, Ավստրիայում, Հունգարիայում, Նիդեռլանդներում կամ Շվեդիայում՝ արդյոք ծրագիրը ներկայացվել է բարեխղճորեն, այսինքն՝ նպատակ չի հետապնդում ձգձգել գործընթացները, խարդախության կամ ներքին գործարքների արդյունք չէ, Ավստրիայում, Ֆրանսիայում, Լեհաստանում կամ Շվեդիայում՝ արդյոք ծրագրի բովանդակությունը բացասական ազդեցություն կարող է ունենալ պարտատերերի ընդհանուր շահերի վրա⁴⁴:

Սնանկության մասին մի շարք երկրների օրենքներ նախատեսում են ծրագրի վիճարկման հնարավորությունը, ինչպես նաև սահմանում են ծրագրի հաստատումը վիճարկելու հիմքերը: Ընդ որում՝ կախված այն հանգամանքից, թե արդյոք նախատեսվում է դատարանի կողմից ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու պահանջ՝ տարբերվում է ծրագրի վիճարկման կարգը: Այսպես, եթե դատարանի կողմից ծրագիրը հաստատելու պահանջ չի ներկայացվում, ապա շահագրգիռ կողմերը կարող են իրենց առարկությունները ներկայացնել քվեարկությունից հետո: Իսկ այն դեպքում, երբ նախատեսվում է ծրագրի հաստատում նաև դատարանի կողմից, վիճարկումը կարող է իրականացվել հենց այդ նիստերի ընթացքում: Ինչ վերաբերում է այն վիճարկելու հիմքերին, ապա դրանք ներառում են հետևյալ դեպքերը՝

⁴⁴ St' u Rescue of Business in Insolvency law, Instrument of the European Law Institute, 2017, էջ 321-322:

✓ հաստատումը ձեռք է բերվել խարդախությամբ (օրինակ՝ պարտատերերին և մյուս շահագրգիռ անձանց ներկայացվել է կեղծ տեղեկատվություն կամ թաքցվել են վերակազմակերպման ծրագրի կամ պարտապանի ֆինանսական միջոցների մասին էական տվյալներ),

✓ քվեարկությունը իրականացվել է օրենքի խախտմամբ (օրինակ՝ քվեարկությանը մասնակցել են փոխկապակցված անձինք, որոնց սնանկության մասին օրենքի ուժով չէր թույլատրվում մասնակցել քվեարկությանը կամ ծրագիրը հաստատող բանաձևը, ընդհանուր առմամբ, չի համապատասխանում պարտատերերի շահերին),

✓ թույլ են տրվել օրենքի պահանջների խախտումներ պարտատերերի այն ժողովի կազմակերպման կամ անցկացման գործընթացում, որի ընթացքում իրականացվել է քվեարկությունը (օրինակ ժողովի հրավիրման մասին պատշաճ ծանուցում չի իրականացվել),

✓ ծրագրում ներառվող միջոցառումները հետապնդում են անօրինական նպատակներ, կամ ծրագրում ներառված պայմանները հակասում են օրենքին,

✓ ծրագիրն իրագործելի չէ (օրինակ ծրագրի արդյունավետ իրագործման համար անհրաժեշտ է նաև այլ անձանց իրավունքով ծանրաբեռնված գույքը, սակայն ապահովված պարտատերերը նման պարտավորություն ծրագրով չեն կրում, և առկա չէ համաձայնություն ապահովված պարտատիրոջ շահերի ապահովման համար),

✓ ծրագիրը չի բավարարում նույն դասի՝ անհամաձայնություն ունեցող պարտատերերի շահերի պաշտպանության պահանջները (օրինակ՝ ծրագրով նրանք չեն կարողանա

ստանալ այնքան բավարարում իրենց պահանջների համար, որքան նրանք կստանային պարտապանի լուծարման դեպքում),

✓ միջոցառումները անարդարացիորեն նախապատվություն են տալիս առարկություններ ներկայացրած անձի շահերին:

Եթե ծրագիրը վիճարկող պարտատերը կողմ է քվեարկել դրան, վիճարկման հիմքերը կարող են սահմանափակվել, օրինակ՝ խարդախությամբ կամ օրենքի պահանջների խախտման դեպքերով⁴⁵:

Հատուկ ուշադրության և քննարկման է արժանի, այսպես կոչված, «cram down» դոկտրինը և ֆինանսական առողջացման ծրագրի նախնական մեխանիզմը՝ որպես ֆինանսական առողջացման ծրագրի իրագործման արդյունավետության բարձրացման գործիք: Այսպես, արտասահմանյան երկրների մեծամասնությունը ֆինանսական առողջացման ծրագրերը հաստատելիս կիրառում են այս դոկտրինը, որի էությունը հետևյալն է. եթե պարտատերերի մեկ կամ մի քանի դասեր դեմ են քվեարկում ծրագրի հաստատմանը, ծրագիրը կարող է հաստատվել դատարանի կողմից պարտատերերի կամքին հակառակ նախատեսված որոշակի դեպքերում: Այս դոկտրինը կիրառվում է պարտատերերի կողմից իրավունքների չարաշահման դեպքերը բացահայտելու համար, որոնք ուղղված են արգելափակելու և խոչընդոտելու իրապես կատարելի և իրագործելի ֆինանսական առողջացման ծրագրի հաստատումը: Օրինակ՝ Ռուսաստանում դատարանը որոշ դեպքե-

⁴⁵ St' u Legislative Guide On Insolvency Law, United Nations Commission On International Trade Law, §59, էջ 227:

րում ակտիվ դերակատարում ունի. մասնավորապես, «Անվճարունակության մասին» օրենքի համաձայն՝ դատարանը կարող է պարտատերերի կամքին հակառակ նախաձեռնել ֆինանսական առողջացման ծրագիր, եթե՝

- պարտատերերի առաջին ժողովի ընթացքում չի ընդունվել նախատեսված գործընթացներից որևէ մեկը,

- որպես պարտապանի պարտավորությունների կատարման ապահովման միջոց դատարան է ներկայացվել բանկային երաշխիքը:

Նշված դոկտրինը, սակայն, որոշ հեղինակների կողմից չի ընդունվում: Կան հեղինակներ, որոնք գտնում են, որ նշված դոկտրինը հակասում է մրցակցության սկզբունքի բուն էությանը, ինչպես նաև պարտատերերի ժողովի ընթացքում պարտատերերի քվեարկության սկզբունքի բովանդակությանը: Սակայն հեղինակների մյուս խումբը նշում է, որ նման մոտեցմանը դժվար թե կարելի է համաձայնել, քանի որ քննարկող դոկտրինի կիրառումը ուղղված է ոչ թե մրցակցության սկզբունքի կամ պարտատերերի իրավունքների և շահերի ոտնահարմանը, նրանց դերի նվազեցմանը, այլ չհիմնավորված առարկությունները հաղթահարելուն, որոնք ուղղված են իրագործելի ֆինանսական առողջացման ծրագրերի դեմ և երբ ծրագրի ընդունումն ու հաստատումը դրական ազդեցություն կարող է ունենալ ինչպես պարտապանի, այնպես էլ պարտատերերի շահերի համար⁴⁶:

Նախքան ընդունված ծրագիրը հաստատելը, դատարանը չի վերանայում ծրագրի բովանդակությունը և քվեարկութ-

⁴⁶ St' u Несостоятельность (банкротство): Учебный курс. В 2 т. / Под ред. д.ю.н., проф. **С.А. Карелиной**. Т. 1. – М.: Статут, 2019, էջ 630:

յան ընթացքը: Մինչ մեծամասնության քվեարկությամբ ընդունվում է ծրագիրը, այն հարկադրաբար (պարտադրված) ընդունելը կարող է արդարացվել միայն իրենց կամքով. այլ դիրքորոշում ու տեսակետ ունեցող պարտատերերը հարկադրվում են, եթե դատարանը նման պահանջ է ներկայացնում: Դոկտորինի տեսանկյունից, դատարանի որոշումը ամրագրվում և պարտավորություն է առաջացնում կնքել պայմանագիր սնանկության մասին օրենքի դրույթների կիրառմամբ: Այդ դեպքում դատարանը չպետք է միայն արձանագրի, որ ծրագիրը իրավաչափ է և բոլորը քվեարկել են իրավաչափ, այլ նաև դատարանը պետք է հավաստիանա, որ ծրագրի բացակայության դեպքում, որի վերաբերյալ բոլորը համաձայնության են եկել, մյուս պարտատիրոջ նկատմամբ խտրական կամ տարբերակված վերաբերմունք և մոտեցում չի դրսևորվել այդ ծրագրով:

Պետք է նշել նաև, որ այն երկրներում, որտեղ նախատեսված է դատարանի կողմից ֆինանսական առողջացման ծրագրի հաստատման պահանջ, միևնույն ժամանակ նախատեսվում է նաև ծրագրի վիճարկման հնարավորությունը դատարանի կողմից հաստատվելուց հետո:

Հաշվի առնելով, որ դատարանի կողմից հաստատվելու փուլում այն պետք է բավարարի մի շարք պայմանների՝ արդարացված է այն մոտեցումը, որ արդեն այդ փուլից հետո վիճարկման հիմքերը ավելի նեղ են: Միևնույն ժամանակ, երբ սնանկության մասին օրենքը հնարավորություն է տալիս վիճարկել նաև ծրագիրը դրա՝ դատական կարգով հաստատումից հետո, անհրաժեշտ է սահմանել նաև որոշակի ժամանակահատված, որի ընթացքում կողմը կարող է վիճարկել, այլ

կերպ ասած, այդ հանգամանքները իրեն հայտնի դառնալուց որքան ժամանակ հետո կարող է ներկայացվել վիճարկման պահանջ, ինչպես նաև այն անձանց շրջանակը, ում կարող է նման իրավունք վերապահվել:

Հատկանշական է, որ սնանկության մասին ՀՀ օրենսդրության մոդելը կառուցված է այնպես, որ դատարանը առանց պարտատերերի ժողովի չի կարող հաստատել ֆինանսական առողջացման ծրագիրը, այսինքն՝ այս հարցում դատարանին ակտիվ դեր վերապահված չէ: Ընդ որում, հաստատման հարցը քննարկելիս դատարանը գնահատում է միայն ծրագրի՝ Օրենքով սահմանված պահանջներին համապատասխանության հարցը: Ընդ որում՝ սա, ըստ էության, Օրենքի 61-րդ հոդվածով սահմանված պարտադիր պայմաններին համապատասխանության տեսանկյունից ծրագրի գնահատումն է:

Այսպես, Օրենքի 64-րդ հոդվածի համաձայն՝ ֆինանսական առողջացման ծրագիրը ժողովի որոշմամբ ընդունվելու և Օրենքով սահմանված պահանջներին համապատասխանելու դեպքում հաստատվում է դատարանի որոշմամբ: Հակառակ դեպքում դատարանը որոշում է ընդունում ֆինանսական առողջացման ծրագիրը մերժելու և պարտապանին լուծարելու մասին:

Ծրագրի հաստատման ընթացակարգի տեսանկյունից կարևորվում է այն պարտատերերի իրավունքների պաշտպանությունը, որոնք դեռևս պահանջներ չեն ներկայացրել սնանկության վարույթում, հետևաբար՝ ծրագիրը այդ պարտատերերին առնչվող հարցերը դեռևս չի շոշափում: Մասնավորապես, ծրագիրը դատարանի հաստատմանը ներկայացնելիս

պարտապանը պարտավոր է դատարան ներկայացնել պահանջներ չներկայացրած պարտատերերի ցուցակը: Պահանջներ չներկայացրած պարտատերերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով⁴⁷ սահմանված կարգով ծանուցվում են պարտապանի սնանկության և պարտատերերի պահանջները մեկամսյա ժամկետում դատարան ներկայացնելու անհրաժեշտության մասին, իսկ ներկայացված պահանջները դատարանը քննարկում է Օրենքի 85-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով: Ընդ որում, եթե ծանուցված պարտատերը պահանջ չի ներկայացնում, ապա պարտապանի ֆինանսական առողջացման հիմքով սնանկության գործն ավարտելուց հետո պարտապանն ազատվում է պարտավորությունից, իսկ չծանուցված պարտատերերը պահպանում են պարտապանի դեմ պահանջ ներկայացնելու իրավունքը:

⁴⁷ Ընդունվել է 09.02.2018թ.: Ուժի մեջ է մտել 09.04.2018թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2018.03.05/16(1374), Հոդ. 208:

§ 6. Ֆինանսական առողջացման ծրագրի իրականացումը և փոփոխությունը

Պարտապանի գործունեությունը ծրագրի շրջանակներում: Օրենքի 65-րդ հոդվածից բխում է, որ ֆինանսական առողջացման ծրագրի իրականացումը ենթադրում է պարտապանի գործունեության համապատասխանեցում ծրագրին և գործունեության իրականացում բացառապես ծրագրի շրջանակներում, այսինքն՝ պարտապանը կառավարչի վերահսկողությամբ պարտավոր է կատարել ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված բոլոր միջոցառումները:

Ֆինանսական առողջացման ծրագրի գործողության ընթացքում պարտապանի կառավարման մարմինները, այդ թվում՝ ղեկավարը, գործում են ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված իրավասության շրջանակներում: Այսինքն՝ պարտապանը պարտավոր է կատարել ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված բոլոր միջոցառումները, որոնց նկատմամբ վերահսկողություն է իրականացվում ինչպես կառավարչի, այնպես էլ դատարանի կողմից⁴⁸: Սնանկության կառավարիչը իր վերահսկողության շրջանակներում առնվազն երեք ամիսը մեկ դատարան է ներկայացնում հաշվետվություն ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման վերաբերյալ, իսկ դատարանն էլ հաշվետվությունների ստուգման միջոցով իրականացնում է իր վերահսկողությունը: Ֆինանսական առողջացման ծրագրով է պայմանավորված նաև պարտատե-

⁴⁸ Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ԱՐԱԴ/0043/04/13 սնանկության գործով 27.12.2017թ. որոշումը:

րերի պահանջների ճակատագիրը. պարտատերերի պահանջները բավարարվում են միայն ծրագրով սահմանված կարգով: Ընդ որում՝ ֆինանսական առողջացման ծրագրի շրջանակներում պարտատերերի պահանջների բավարարումն իրականացվում է այնպես, որ հնարավոր լինի ֆինանսապես առողջացնել սնանկ ճանաչված պարտապանին⁴⁹:

Արդյունքում ֆինանսական առողջացման ծրագրի հաստատումից հետո պարտապանը քաղաքացիաիրավական շրջանառությունում հանդես է գալիս միայն ծրագրի շրջանակներում, որը բնականաբար էականորեն դրական նշանակություն է կրում և մեծապես պայմանավորում է պարտապանի հնարավոր առողջացումը: Սա հատկապես ենթադրում է պարտապանի ղեկավար մարմինների գործունեության սահմանափակում ծրագրով նախատեսված իրավասությունների շրջանակում:

Ֆինանսական առողջացման ծրագրի իրականացման ընթացքում պարտապանի կառավարման մարմինների իրավասությունների և գործունեության սահմանափակումների համակարգը կարող է բաղկացած լինել, օրինակ, հետևյալ տարրերից՝

- 1) մի շարք կորպորատիվ որոշումներ (օրինակ՝ շահութաբաժինների վճարման վերաբերյալ) կայացնելու արգելք,
- 2) կոնտրագենտների հետ որոշակի գործարքներ կնքելու արգելք (մասնավորապես, պարտավորությունների փոխադարձ հաշվանցի վերաբերյալ),
- 3) որոշակի գործարքներ կնքելու վերաբերյալ պարտա-

⁴⁹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԲԴ/0254/02/16 քաղաքացիական գործով 27.12.2017թ. որոշումը:

տերերի ժողովի (խորհրդի) կամ կառավարչի համաձայնության ստացում,

4) պարտապանի ղեկավարի փոխարինման հատուկ մեխանիզմների առկայություն⁵⁰:

Նման սահմանափակումները, բնականաբար, պետք է նախատեսված լինեն ֆինանսական առողջացման ծրագրում: Ընդ որում՝ իրենց ամբողջության մեջ այդ սահմանափակումները կարող են որակվել որպես պարտապանի իրավունակության սահմանափակում⁵¹, իսկ այդպիսի սահմանափակման հիմք է Օրենքի 65-րդ հոդվածի 3-րդ մասը, ըստ որի՝ ֆինանսական առողջացման ծրագրի գործողության ընթացքում պարտապանի կառավարման մարմինները, այդ թվում՝ ղեկավարը, գործում են ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված իրավասության շրջանակներում:

Ֆինանսական առողջացման ծրագրի ժամկետը: Ֆինանսական առողջացման ծրագրի իրականացման տեսանկյունից կարևորվում է նաև դրա ժամկետը:

Ընդհանրապես, ծրագրով նախատեսվող միջոցառումների իրականացման ընդհանուր ժամկետը հիմնավորվում է՝ ելնելով պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծության արդյունքներից՝ հաշվի առնելով վերլուծության արդյունքում բացահայտված ներքին և արտաքին ռեսուրսները, ինչպես նաև վճարունակության վերականգման համար առաջարկվող միջոցառումների բնույթը:

Օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ֆինան-

⁵⁰ Տե՛ս Несостоятельность (банкротство): Учебный курс. В 2 т. / Под ред. д.ю.н., проф. **С.А. Карелиной**. Т. 1. – М.: Статут, 2019, էջ 645:

⁵¹ Տե՛ս նույն տեղում:

սական առողջացման ծրագրի ժամկետը չի կարող գերազանցել 36 ամիսը, եթե Օրենքով սահմանված կարգով դրա գործողության ժամկետը չի երկարաձգվել: Օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավորը որոշում է ընդունում ֆինանսական առողջացման ծրագրի ժամկետը մինչև 12 ամիս երկարաձգելու կամ դրա մեջ փոփոխություններ մտցնելու մասին, եթե այդ որոշումն ընդունվել է ֆինանսական առողջացման ծրագրի ընդունման վերաբերյալ Օրենքով սահմանված պահանջներին համապատասխան: Իսկ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ֆինանսական առողջացման ծրագրի ընդհանուր տևողությունը դատարանի կողմից դրա սկզբնական հաստատումից հետո չի կարող գերազանցել 72 ամիսը, իսկ սկզբնական հաստատվող ֆինանսական առողջացման ծրագրի տևողությունը չի կարող գերազանցել 36 ամիսը:

Պետք է նկատել, սակայն, որ Օրենքով նախատեսված առավելագույն եռամյա ժամկետի սահմանումը այդքան էլ արդարացված չի թվում, քանի որ պարտապանները կարող են ունենալ տարբեր կարգավիճակ (ռազմավարական, քաղաքաշինական, գյուղացիական տնտեսության) և նրանց ֆինանսական առողջացումը կարող է էական նշանակություն ունենալ պետության և տնտեսության համար, ուստի այդ դեպքերի համար պետք է նախատեսել ֆինանսական առողջացման ծրագրի իրագործման առավել երկար ժամկետներ՝ հինգից տասը տարի⁵²:

Հատկանշական է, որ ներկայումս տնտեսապես զարգա-

⁵² Տե՛ս **Свириденко О.М.** Концепция несостоятельности (банкротства) в Российской Федерации: методология и реализация: автореф. ... канд. юрид. наук: специальность 12.00.03 / О.М. Свириденко. – М., 2010, էջ 19:

ցած մի շարք երկրներ նախատեսում են պարտապանի վճարունակության վերականգնման ավելի երկար ժամկետներ: Օրինակ՝ Ֆրանսիայում նախատեսվում է ֆինանսական առողջացման ծրագրերի իրագործման տասը տարվա ժամկետ, առանձին պարտապանների դեպքում՝ 15 տարի: ԱՄՆ-ի, Իսպանիայի և Բելգիայի օրենսդրությամբ ֆինանսական առողջացման ծրագրի ժամկետը մինչև հինգ տարի է, որի մեջ չի ներառվում երկարաձգման համար նախատեսված ժամկետը:

Ֆինանսական առողջացման ծրագրի փոփոխությունը:

Ֆինանսական առողջացման ծրագրի հաջողման հնարավորության մեծացմանն ուղղված կարևոր գործիքներ են ծրագրում փոփոխությունների կատարման և, ինչպես նշվեց վերևում, ծրագրի ժամկետը մինչև 12 ամսով երկարաձգելու հնարավորությունները: Փոփոխությունների իրականացման կարգի առումով Օրենքի 66-րդ հոդվածը նախատեսում է ֆինանսական առողջացման ծրագրում փոփոխություններ կատարելու հնարավորությունը նույն կարգով, ինչպես իրականացվում է ժամկետի երկարաձգումը:

Օրենքը ծրագիր ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտներին թույլ է տալիս այդ հարցերով դիմել պարտատերերի ժողովին: Դիմումը քննարկվում է ֆինանսական առողջացման ծրագրի քննարկման ընթացակարգերին համապատասխան, և պարտատերերի ժողովի հավանության դեպքում դատարանը որոշում է ընդունում ծրագրում փոփոխություն կատարելու և/կամ ժամկետը մինչև 12 ամսով երկարաձգելու մասին: Երկարաձգման հնարավորությունների քանակը սահմանափակված չէ, սակայն Օրենքը սահմանափակել է առող-

ջացման ծրագրի ընդհանուր ժամկետը, որը դրա սկզբնական հաստատումից հետո իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի սնանկության դեպքում չի կարող գերազանցել 72 ամիսը, իսկ ֆիզիկական անձանց սնանկության դեպքում՝ 4 տարին:

Ամեն դեպքում, պետք է նկատել, որ ֆինանսական առողջացման ծրագրի ժամկետի երկարաձգումը ինքնին կարող է հանգեցնել ֆինանսական առողջացման ծրագրի բովանդակության, այսինքն՝ միջոցառումների փոփոխությանը: Բացի այդ՝ ֆինանսական առողջացման ծրագրի փոփոխությունները ևս պետք է իրականացվեն այն սկզբունքներով, որոնք կիրառվում են ծրագրի նախնական կազմման և ընդունման դեպքում՝ ծրագրի օրինականություն, իրատեսականություն, պարտատերերի շահերի հավասարակշռում և այլն:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որոշ երկրներ հնարավորություն են տալիս սահմանափակ հիմքերի առկայության դեպքում փոփոխել ծրագիրը նույնիսկ պարտատերերի կողմից ընդունվելուց հետո, եթե դրա կատարումը ամբողջությամբ կամ մասամբ ձախողվել է, և ծագած խնդիրը հնարավոր է լուծել: Որոշ երկրներ հնարավորություն են նախատեսում փոփոխել ծրագիրը, եթե միայն այդ փոփոխությունները բխում են պարտատերերի լավագույն շահերից: Մյուս դեպքում սահմանվում է, որ ծրագիրը կարող է փոփոխվել, եթե առաջացած հանգամանքները արդարացնում են ծրագրի փոփոխությունը, և փոփոխվելուց հետո էլ ծրագիրը շարունակելու է բավարարել սնանկության մասին օրենսդրությամբ նախատեսված պահանջներին: Կախված փոփոխության էությունից և բովանդակությունից՝ կարող է

բավարար համարվել դրա ընդունումը միայն դատարանի կողմից կամ այն պարտատերերի, ում իրավունքներին և օրինական շահերին ազդում է առաջարկվող փոփոխությունը: Այն դեպքում, երբ փոփոխությունները կրում են էական բնույթ, ապա պահանջվում է բոլոր պարտատերերի համաձայնությունը⁵³:

⁵³ Տե՛ս Legislative guide on insolvency law, United Nations Commission on international trade law, էջ 231:

§ 7. Ֆինանսական առողջացման վարույթի ավարտը

Օրենքի 68-րդ և 69-րդ հոդվածների վերլուծությունը թույլ է տալիս ֆինանսական առողջացման վարույթի ավարտի հիմքերը դասակարգել երկու հիմնական խմբի՝

1) ֆինանսական առողջացման ծրագրի վաղաժամկետ դադարեցման հիմքեր,

2) ֆինանսական առողջացման ծրագրի ավարտի հիմքեր:

Ծրագրի վաղաժամկետ դադարեցման հիմքերը հետևյալն են՝

- երբ տեղի է ունենում ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված պարտավորությունների մարման ժամանակացույցի էական խախտում,

- առկա են հանգամանքներ, որոնք վկայում են, որ պարտապանն ի վիճակի չէ կատարել պարտավորությունների մարման ժամանակացույցը⁵⁴,

- ֆինանսական առողջացման ծրագրի հաստատումից հետո դատարան են ներկայացվում նոր պահանջներ և մեկամյա ժամկետում չեն ներկայացվում ծրագրի փոփոխություններ, որոնք նախատեսում են նաև նոր ներկայացված պահանջների բավարարում, կամ այդ փոփոխությունները ներ-

⁵⁴ Նմանատիպ իրավիճակ կարող է առաջանալ, օրինակ, այն դեպքերում, երբ ծրագրով նախատեսված վճարումների իրականացումը կապված է ծրագրի շրջանակներում նախատեսված մեկ այլ գործողության, օրինակ՝ դեբիտորական պարտքերի բռնագանձման հետ, և բռնագանձման պահանջով դատական վարույթի ընթացքից ակնհայտ է, որ մինչև ծրագրի գործողության ավարտը այդ ընթացակարգով պարտավորությունները չեն մարվելու:

կայացվում են դատարան և դատարանի որոշմամբ մերժվում են:

Ծրագրի վաղաժամկետ դադարեցման պահանջով դատարան կարող են դիմել կառավարիչը, պարտապանը, առավել խոշոր պահանջներ ունեցող հինգ չապահովված պարտատերերը, իսկ այն դեպքում, երբ ֆինանսական առողջացման ծրագրի իրականացման ընթացքում պետք է օգտագործվի ապահովված պարտատիրոջ (պարտատերերի) պահանջի դիմաց գրավադրված գույքը, ապա նաև նշված ապահովված պարտատերը (պարտատերերը):

Հիշատակված հիմքերի առկայության կամ բացակայության հարցը որոշում է դատարանը, և կայացնում ֆինանսական առողջացման ծրագիրը դադարեցնելու և պարտապանին լուծարելու մասին, եթե ներկայացված հիմքերից որևէ մեկը առկա է, իսկ հակառակ դեպքում ֆինանսական առողջացման ծրագրի վաղաժամկետ դադարեցումը մերժվում է:

Ինչ վերաբերում է ֆինանսական առողջացման ծրագրի ավարտին, ապա այն տեղի է ունենում այն դեպքում, երբ՝

- ֆինանսական առողջացման ծրագրի ժամկետը լրացել է և

- կառավարիչը դատարան է ներկայացնում ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվություն:

Ընդ որում՝ վերոնշյալ հիմքով վարույթն ավարտելու դեպքում հնարավոր է երկու ելք՝ կախված պարտատերերի պահանջները բավարարված լինել կամ չլինելու հանգամանքից:

Այսպես, եթե մինչև ֆինանսական առողջացման ծրագրի գործողության վերջնաժամկետը ծրագիրը վաղաժամկետ չի

ավարտվում կամ դադարեցվում, ապա ֆինանսական առողջացման ծրագրի ժամկետի ավարտից ոչ ուշ, քան 15 օր առաջ կառավարիչը պետք է դատարան ներկայացնի ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվություն՝ կցելով.

ա) պարտապանի վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունը,

բ) պարտատերերի պահանջների գրանցամատյանը՝ նշելով բավարարված պահանջները,

գ) պարտատերերի պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերը:

Հարկ է նշել, որ կառավարչի հաշվետվությունը էական նշանակություն ունի ֆինանսական առողջացման վարույթի ավարտի հարցը լուծելու տեսանկյունից: Այն պետք է պարունակի ֆինանսական առողջացման ծրագրի կատարման ընթացքի և պարտավորությունների բավարարման մասին տեղեկությունների այնպիսի ծավալ, որոնց գնահատման արդյունքում դատարանը հնարավորություն ունենա կայացնելու պարտապանին առողջացած համարելու և սնանկության վարույթն ավարտելու կամ պարտապանի նկատմամբ լուծարման վարույթ սկսելու մասին որոշումներից որևէ մեկը:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվությունը պարտապանի ֆինանսական առողջացման մասին ամփոփ տեղեկատվություն պարունակող փաստաթուղթ է, որն արտացոլում է պարտապանի՝ վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական դրությունը, պարտապանի ֆինանսական առողջացմանն ուղղված և իրականացված միջոցառում-

ների նկարագիրը, պարտատերերի պահանջների բավարարված լինելու կամ չլինելու հանգամանքը և այլ տեղեկություններ: Այլ կերպ ասած՝ ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվության ներկայացումը պարտապանի ֆինանսական առողջացման գործընթացի ավարտին ուղղված ընթացակարգ է, քանի որ այդ փաստաթղթի քննարկման արդյունքներով է որոշվում՝ պարտապանը վերջնականապես առողջացել է, թե՛ ոչ: Ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվության ներկայացումը դատարանին, դատարանի կողմից դրա քննարկումը և արդյունքում համապատասխան դատական ակտի կայացումը վկայում են այն մասին, որ պարտապանի ֆինանսական առողջացման նկատմամբ իրականացվում է նաև դատական վերահսկողություն⁵⁵:

Ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվությունը ստանալուց ոչ ուշ, քան երկու և ոչ շուտ, քան մեկ շաբաթվա ընթացքում դատարանը նշանակում է նիստ՝ այդ մասին առնվազն երեք օր առաջ ծանուցելով կառավարչին, պարտապանին և պարտատերերին: Եթե պարտատերերի թիվը 10-ից ավելի է, ապա նրանց համար պատշաճ ծանուցում է համարվում իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում նիստի վայրի և ժամանակի մասին հրապարակված հայտարարությունը, իսկ ամենախոշոր 5 պարտատերերին ծանուցումն ուղարկվում է պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ հաղորդագրության ձևակերպումն

⁵⁵ Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ԱՐԱԴ/0043/04/13 սնանկության գործով 27.12.2017թ. որոշումը:

ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ կամ հանձնվում է ստացականով: Ընդ որում՝ կառավարչի, պարտապանի և որևէ պարտատիրոջ չներկայանալն արգելք չէ նիստի անցկացման համար:

Դատական նիստում դատարանը, ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին կառավարչի հաշվետվության և ֆինանսական առողջացման ծրագրի կատարման վերաբերյալ պարտատերերի առարկությունների քննության արդյունքներով կայացնում է.

ա) վճիռ՝ ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին կառավարչի հաշվետվությունը հաստատելու և սնանկության վերաբերյալ գործն ավարտելու մասին, եթե պարտատերերի պահանջները բավարարվել են կամ

բ) որոշում՝ ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին կառավարչի հաշվետվության հաստատումը մերժելու և պարտապանին լուծարելու մասին, եթե պարտատերերի պահանջները բավարարված չեն:

Հատկանշական է, որ այս առումով Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ օրենսդրի կողմից ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվության քննարկման արդյունքում դատարանի կողմից կայացվող դատական ակտերի տեսակների սպառիչ սահմանումն ինքնանպատակ չէ, այլ կոչված է սնանկության վարույթում ապահովելու բոլոր պարտատերերի շահերի պաշտպանությունը և դրանց միջև հավասարակշռությունը: Ըստ այդմ՝ այն դեպքում, երբ ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվության քննարկման արդյունքներով պարզվում է, որ բոլոր պարտատերերի պահանջները բավա-

րարվել են, դատարանը հաստատում է ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվությունը և վճիռ է կայացնում սնանկության գործն ավարտելու մասին, մինչդեռ այն դեպքում, երբ պարզվում է, որ բոլոր պարտատերերի պահանջները բավարարված չեն, դատարանը որոշում է կայացնում ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին հաշվետվության հաստատումը մերժելու և պարտապանին լուծարելու մասին⁵⁶:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ ֆինանսական առողջացման վարույթը կարող է ունենալ երկու ելք՝ ա) պարտապանի լուծարում՝ առողջացման ծրագրի վաղաժամկետ դադարեցման, ինչպես նաև պարտատերերի պահանջները բավարարված չլինելու պայմաններում ծրագրի ավարտի դեպքերում,

բ) պարտապանի առողջացում և սնանկության վարույթի ավարտ՝ պարտատերերի պահանջները բավարարված լինելու պայմաններում ծրագրի ավարտի դեպքում:

Անդրադառնալով սնանկության վերաբերյալ գործի ավարտման հետևանքներին՝ պետք է նշել, որ այդ հարցին անդրադառնում է Օրենքի 90-րդ հոդվածի 2-րդ մասը, որի ուժով սնանկության վերաբերյալ գործի ավարտի դեպքում պարտապանը համարվում է ֆինանսապես առողջացած և կարող է շարունակել իր գործունեությունը: Այդ դեպքում գործն ավարտելու պահից վերանում են Օրենքի ուժով նախատեսված կասեցումները: Միաժամանակ, առողջացած անձն ազատվում է բոլոր այն պարտավորություններից, որոն-

⁵⁶ Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ԱՐԱԴ/0043/04/13 սնանկության գործով 27.12.2017թ. որոշումը:

ցից բխող պահանջները չեն ներկայացվել ավարտված սնանկության գործի շրջանակներում, և այդ պարտատերերը գրկվում են հետագայում առողջացած անձի նկատմամբ պահանջներ ներկայացնելու իրավունքից: Սակայն նշված կանոնից նախատեսվում են նաև բացառություններ, որոնց ընտրությունը պայմանավորված է դրանց կենսական նշանակությամբ և կարևորությամբ:

Այսպես, եթե սնանկության գործն ավարտվել է սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, ապա պարտապանը չի ազատվում բոլոր այն պարտավորություններից, որոնցից բխող պահանջները չեն ներկայացվել ավարտված սնանկության գործի շրջանակներում: Պարտապանը չի կարող ազատ ճանաչվել նաև՝

- ✓ ալիմենտների վճարումից,
- ✓ սնանկ ճանաչելու պահին նախորդած մեկ տարվա ընթացքում հարկային մարմիններից թաքցրած պարտավորությունների վճարումներից,
- ✓ կյանքի և առողջությանը պատճառված վնասներից առաջացող պարտավորություններից,
- ✓ հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման պարտավորություններից,
- ✓ այն պարտավորություններից, որոնցից բխող պահանջները չեն ներկայացվել պարտատերերից անկախ պատճառներով՝ հարգելի ճանաչված դեպքերում:

Հարկ է, սակայն, նկատի ունենալ, որ վերոնշյալ բացառությունները կիրառելի են բացառապես սնանկության վարույթի ավարտից հետո այն պարտավորությունների նկատ-

մամբ, որոնցից բխող պահանջները չեն ներկայացվել ավարտված սնանկության գործի շրջանակներում, կամ էլ ներկայացման պարագայում բավարարում չեն ստացել, և ընդ որում՝ ոչ թե ցանկացած պարտավորության, այլ միայն նրանց մասով, որոնք նախատեսված են Օրենքի 90-րդ հոդվածի 4-րդ մասով⁵⁷:

⁵⁷ Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ԵԱՔԴ/1747/02/12 քաղաքացիական գործով 30.04.2015թ. որոշումը:

§ 8. Ֆիզիկական անձի ֆինանսական առողջացման առանձնահատկությունները

Ֆիզիկական անձանց ֆինանսական առողջացման հարցի շրջանակներում Օրենքի 94-րդ հոդվածը սահմանում է, որ ֆիզիկական անձի ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատում է դատարանը, եթե այն համապատասխանում է Օրենքով սահմանված պահանջներին, և առկա է պարտապանի և գրանցված պարտատիրոջ համաձայնությունը:

Հիշյալ հոդվածը նաև նախատեսում է, որ ֆիզիկական անձի առողջացման ծրագիրը ներկայացնելու, հաստատելու հետ կապված հարաբերությունների նկատմամբ տարածվում են իրավաբանական անձանց համար Օրենքով սահմանված իրավակարգավորումները, եթե այլ բան սահմանված չէ նույն հոդվածով: Օրենքը հատուկ կարգավորում է նախատեսում նաև ֆիզիկական անձի առողջացման ծրագրի առավելագույն ժամկետի մասով՝ սահմանելով, որ չի կարող գերազանցել չորս տարին:

Ընտաքըքրական է նաև ֆինանսական առողջացման ծրագրերի ներկայացման մասով վիճակագրությունը՝ հաշվի առնելով, որ սնանկության ինստիտուտի առաջնային և կարևորագույն նպատակը պետք է լինի ֆինանսապես առողջանալը, շուկայական տնտեսության կայուն և մրցունակ սուբյեկտ դառնալը:

Այսպես, սնանկության ոլորտի հետազոտությունների շրջանակներում կատարված հարցումների համաձայն՝ պարտապան ֆիզիկական անձանց շուրջ 77,2 տոկոսը չի ցանկացել ներկայացնել ֆինանսական առողջացման ծրագիր, 17,1

տոկոսը՝ ցանկացել, բայց չեն ներկայացրել, իսկ ներկայացրել է միայն 5,7 տոկոսը: Ի համեմատություն նշենք, որ օրինակ՝ իրավաբանական անձանց դեպքում ֆինանսական առողջացման ծրագրեր ներկայացվել են առավել շատ դեպքերում, այն է՝ 16,8 տոկոսը, և ֆիզիկական անձանց ավելի բարձր տոկոսը չեն ցանկացել ներկայացնել ֆինանսական առողջացման ծրագիր 77.2%, համեմատած իրավաբանական անձանց 63.6%⁵⁸: Այսինքն՝ ֆինանսական առողջացումների դեպքերի հարցում պատկերն էականորեն տարբերվում է՝ կախված պարտապանի կարգավիճակից:

Հարկ է նշել, որ նախքան 2016 թվականին Օրենքում կատարված փոփոխությունները, պարտատերերը չէին կարող մասնակցել ֆիզիկական անձի ֆինանսական առողջացման ծրագրի քվեարկությանը: Մասնավորապես, 94-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում էր, որ ֆիզիկական անձի ֆինանսական առողջացման ծրագիրը պարտատերերի կողմից չի քվեարկվում: Միննույն ժամանակ, նախատեսվում էր առողջացման ծրագիրը պարտատերերի կողմից վիճարկելու հնարավորությունը:

Վերոնշյալ կարգավորումը քննարկման առարկա էր դարձել նաև դատական պրակտիկայում: Վճռաբեկ դատարանը, նշելով, որ նախ օրենսդիրը նպատակ է հետապնդում հնարավորություն ընձեռելու բարեխիղճ և պարտաճանաչ պարտապանին վերականգնելու իր բնականոն գործունեությունը, հաղթահարելու ֆինանսական դժվարությունները, վերականգնելու կենսունակությունը: Միննույն ժամանակ պարտատերերի շահերի պաշտպանությունը ապահովելու նպա-

⁵⁸ Տե՛ս ՀՀ սնանկության ոլորտի հետազոտության հաշվետվություն, էջ 80:

տակով Օրենքը սահմանում է ֆինանսական առողջացման ծրագրին պարտատերերի ծանոթանալու իրավունքը, իրավաբանական անձի ֆինանսական առողջացման ծրագիրը պարտատերերի կողմից քննարկելու և քվեարկությամբ ընդունելու կամ չընդունելու հնարավորությունը: Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ վերոգրյալով հանդերձ, ֆիզիկական անձի սնանկության առանձնահատկություններից ելնելով, օրենսդիրը վերջինիս ֆինանսական առողջացման ծրագրի վերաբերյալ պարտատերերի կողմից քվեարկության հնարավորություն չի նախատեսել, այդուհանդերձ, հնարավորություն է տվել պարտատերերին՝ ծանոթանալու ֆինանսական առողջացման ծրագրին և իրենց իսկ շահերի պաշտպանությունից ելնելով՝ նաև վիճարկել այն: Վճռաբեկ դատարանը նախ նշել է, որ, քանի որ ֆիզիկական անձի ֆինանսական առողջացման ծրագրին ծանոթանալու և այն վիճարկելու համար «Սնանկության մասին» օրենքով որևէ ժամկետ սահմանված չէ, հետևաբար դրա նկատմամբ կիրառելի են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ընդհանուր իրավակարգավորումները, համաձայն որի՝ դատավարական գործողությունները կատարվում են նույն օրենսգրքով կամ այլ օրենքներով սահմանված ժամկետներում: Դրանց բացակայության դեպքում դատավարական գործողությունների կատարման ժամկետները սահմանում է դատարանը: Մյուս կողմից էլ, հաշվի առնելով, որ ֆիզիկական անձի ֆինանսական առողջացման ծրագրի վերաբերյալ պարտատերերի կողմից քվեարկություն օրենքը չի նախատեսում, և ֆիզիկական անձ պարտապանի կողմից ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացնելու դեպքում պարտատերերի շահերի պաշտպա-

նության իրականացումը նշված փուլում դրսևորվում է միայն վերջիններիս կողմից ֆինանսական առողջացման ծրագիրը վիճարկելու հնարավորությամբ, Վճռաբեկ դատարանը գտել է, որ դատարանները ֆինանսական առողջացման ծրագրի դեմ առարկություն ներկայացնելու, ֆինանսական առողջացման ծրագիրը վիճարկելու ժամկետները սահմանելիս պետք է հաշվի առնեն պարտատերերի շահերի պաշտպանությունը՝ այդ իրավունքի իրականացման համար ապահովելով իրական երաշխիքներ (...):⁵⁹

Հարկ է նշել, որ ներկայումս այդ կարգավորումները ուժը կորցրած են ճանաչվել: Դրա փոխարեն, ինչպես նշվեց, սահմանվել է, որ առողջացման ծրագիրը հաստատվում է, եթե առկա է պարտապանի և գրանցված պարտատիրոջ համաձայնությունը: Նման կարգավորումը, կարծես, իրավիճակային լուծում է տալիս այն դեպքերում, երբ առկա է մեկ պարտատեր, որը տալիս է իր համաձայնությունը ֆինանսական առողջացման ծրագրին: Սակայն խնդիրն առաջանում է այն դեպքում, երբ առկա են մի քանի պարտատերեր: Այս դեպքում, եթե ելնենք իրավաբանական անձի ֆինանսական առողջացման կարգավորումներից, ծրագիրը պետք է քվեարկվի պարտատերերի ժողովում, իսկ ժողովում քվեարկությունը ենթադրում է, որ որոշում կարող է ընդունվել ձայների որոշակի հարաբերակցությամբ, այնինչ 94-րդ հոդվածի կարգավորումը տարընկալման տեղիք է տալիս. որն է համարվում այս դեպքում պարտատիրոջ համաձայնությունը, եթե քվեարկությունը տեղի է ունենում պարտատերերի ժողովում, արդյոք սա

⁵⁹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ՇԴ/0031/04/13 սնանկության գործով 30.04.2015 թվականի որոշումը:

ենթադրում է, որ ֆիզիկական անձի առողջացման ծրագրի քվեարկության դեպքում անհրաժեշտ է բոլոր պարտատերերի համաձայնությունը միաձայնությամբ, թե պարտատիրոջ համաձայնությունը այս պարագայում պետք է դիտարկվի որպես պարտատերերի ժողովի կողմից ընդունված որոշում՝ ձայների սովորական հարաբերակցությամբ: Այս առնչությամբ, իհարկե, օրենքը լրացուցիչ հստակեցման կարիք ունի, սակայն կարծում ենք, որ, ելնելով իրավաբանական անձի ֆինանսական առողջացման ընդհանուր կարգավորումների կիրառելիության սկզբունքից և այն հանգամանքից, որ պարտապանի առողջացման գործընթացում արհեստական խոչընդոտները բացասական ազդեցություն վտանգ են պարունակում, այս հարցի առնչությամբ ևս պետք է կիրառվեն ընդհանուր սկզբունքները և պարտատիրոջ համաձայնությունը պարտատերերի բազմաթվության դեպքում պայմանավորվի պարտատերերի ժողովի՝ սովորական կարգով ընդունված որոշմամբ:

Օրենքը առանձին դրույթով անդրադարձել է պարտապանի գույքին, որը կարող է ներառվել վաճառքի ենթակա գույքի կազմում: Ընդ որում, գույքի շրջանակը կախվածության մեջ է դրվում նաև այն հանգամանքից, թե արդյոք գործի շրջանակում հաստատվել է ֆինանսական առողջացման ծրագիր, թե ոչ: Մասնավորապես, ֆիզիկական անձի առողջացման ծրագիր հաստատված լինելու դեպքում վերջինիս վաճառքի ենթակա գույքի կազմում ներառվում է նաև այն գույքը, որը նա ձեռք է բերել սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո, սակայն մինչև գործի ավարտը կամ Օրենքի 68-րդ հոդվածով նախատեսված դեպքի վրա հասնելը: Իսկ ֆինանսական առողջացման ծրագիր

հաստատված չլինելու դեպքում պարտապան ֆիզիկական անձի վաճառքի ենթակա գույքի կազմում չի ներառվում վերջինիս սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո ձեռք բերված գույքը, բացառությամբ դրան հաջորդող 180 օրվա ընթացքում ժառանգությամբ ստացված կամ ժառանգություն բացելու դեպքում ստացման ենթակա գույքի, ինչպես նաև այն գույքի, որը ստացվել է մինչև սնանկության դիմում ներկայացնելը պարտապանի կնքած գործարքի արդյունքում:

Օրենքի փոփոխություններով Օրենքի 95-րդ հոդվածում կատարվել է լրացում, որի համաձայն՝ հոդվածը չի տարածվում պարտապանի աշխատավարձից կատարվող գանձումների վրա: Կատարված լրացումը նպատակ է հետապնդում ապահովել պարտատերերի պահանջների առավելագույնս բավարարումը: Մասնավորապես, Օրենքի 95-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված կարգավորմամբ նույն հոդվածով նախատեսված սահմանափակումներն ու բացառությունները չեն կարող տարածվել աշխատավարձի վրա, այլ կերպ ասած՝ այդ հոդվածում կիրառվող գույք եզրույթի շրջանակներում այն չի դիտարկվում: Ասվածը նշանակում է, որ կատարված փոփոխությունների ուժով աշխատավարձի նկատմամբ բռնագանձումը սնանկության վարույթի շրջանակներում կատարվում է ընդհանուր հիմունքներով և որևէ առանձնահատկություն այդ հարցում նախատեսված չէ⁶⁰:

⁶⁰ Դատական պրակտիկայում, սակայն, այս հարցին տրվել է այլ մեկնաբանություն: Մասնավորապես, օրինակ՝ Վերաքննիչ քաղաքացիական դատարանը թիվ ՍնԴ/1823/04/20 սնանկության գործով 03.03.2021 թվականի որոշմամբ հանգել է նրան, որ Օրենքի 95-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավակարգավորումը վերաբերում է անմիջապես գործարքի

Ասվածը կարելի է հիմնավորել նաև այն հանգամանքով, որ աշխատավարձի նկատմամբ բռնագանձում տարածելու կարգը կիրառվում է կատարողական վարույթի ընթացքում: Մասնավորապես, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 5-րդ, 43-րդ, 58-րդ հոդվածների համակարգային մեկնաբանությունից բխում է, որ բոլոր դեպքերում առաջին հերթին բռնագանձման ենթակա են պարտապանի դրամական միջոցները: Նշված մոտեցումը տրամաբանական է և արդարացված, քանի որ պարտատիրոջ պահանջը ևս դրամական պահանջ է: Ուստի այն դեպքում, երբ պարտապանն ունի բավարար դրամական միջոցներ, ապա արդարացված չի լինի այդ պահանջի բավարարման համար արգելադրել և իրացնել պարտապանին պատկանող այլ՝ շարժական կամ անշարժ, գույք: Ավելին, այլ գույքի հայտնաբերումը և դրա հաշվին պարտատիրոջ պահանջի բավարարումը ենթադրում է լրացուցիչ ռեսուրսների կիրառում ևս: Ուստի Օրեն-

արդյունք գույքի ձեռքբերման դեպքերին, և դրա կանոնները կիրառելի չեն աշխատանքային իրավահարաբերությունների նկատմամբ: Դատարանը, ի թիվս այլնի, նշել է, որ աշխատավարձի արգելադրումը սնանկության վարույթում չի կարող իրականացվել այնպես, որ պարտապանը սնանկ ճանաչվելուց հետո անորոշ ժամանակով զրկվի իր աշխատանքի դիմաց վարձատրությունն օգտագործելու հնարավորությունից, քանի որ դա անմիջական խոչընդոտ կհանդիսանա սնանկության վարույթի ընթացքում պարտապանի սոցիալ-ֆինանսական վերականգնման համար և կկաշկանդի նրան դրսևորել որևէ նախաձեռնողականություն նոր աշխատանք փնտրելու կամ եկամուտներ ստանալու հարցում: Դատարանի գնահատմամբ՝ Օրենքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի գործողությունը տարածվում է Աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով միայն մինչև սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահը վճարված աշխատավարձից կատարվող գանձումների վրա և պարտապանի՝ վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո ստացվող աշխատավարձը չի մտնում Օրենքի 95-րդ հոդվածի իմաստով վաճառքի ենթակա գույքի կազմի մեջ:

քով նախատեսվել է արդյունավետ և ճկուն լուծում, որը կապահովի պարտապանի կողմից որոշակի դրամական միջոցներ տնօրինելու հնարավորությունը՝ միաժամանակ ապահովելով պարտատիրոջ իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

Նման կարգավորումները, սակայն, գործում են օրենքով նախատեսված լրացուցիչ երաշխիքների հաշվառմամբ: Այսպես՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 6-րդ գլուխը սահմանում է պարտապան ֆիզիկական անձի աշխատավարձի և այլ տեսակի եկամուտների վրա բռնագանձում տարածելու հնարավորությունը: Սակայն աշխատավարձի նկատմամբ կիրառվող սահմանափակումը բացարձակ բնույթ չի կրում, քանի որ բռնագանձում տարածելիս թույլատրվում է պահել այդ եկամուտների միայն մի մասը և միայն այդ մասն ուղղել պահանջների բավարարմանը:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված է, որ աշխատավարձից և դրան հավասարեցված վճարներից կարող է պահվել 50 տոկոսից ոչ ավելի: Այլ կերպ ասած, մյուս մասով աշխատավարձի վրա բռնագանձում չի տարածվում: Առանձին դեպքերում պահումների չափը չի կարող գերազանցել աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների 75 տոկոսը: Այս երաշխիքները կիրառվում են նաև սնանկության վարույթում, քանի որ Օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի ուժով կառավարիչը դատարանի որոշման հիման վրա արգելադրում է պարտապանին սեփականության իրավունքով պատկանող գույքը, բացառությամբ այն գույքի, որի վրա, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն,

բռնագանձում չի կարող տարածվել: Իսկ այդ գույքերի ցանկը, որոնց թվում է նաև աշխատավարձի 50 տոկոսը, նախատեսված է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով:

Օրենքը, պարտապանի շահերի պաշտպանության նպատակով նախատեսել է այն գույքերի շրջանակը, որը սնանկության վարույթում իրացման ենթակա չէ: Մասնավորապես նախատեսվել է, որ պարտատերերի պահանջների բավարարման նպատակով իրացման (օտարման) ենթակա չէ պարտապանի այն գույքը, որի վրա Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով չի կարող բռնագանձում տարածվել: Այդ գույքերի ցանկը նախատեսվում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 51-րդ հոդվածով: Նշվածը վերաբերում է նաև պարտապանի միակ բնակարան հանդիսացող գույքին, որը չբռնագանձելու ռեժիմը տարածվում է նաև սնանկության վարույթում⁶¹: Այս առումով Օրենքի 96-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ եթե հարկադիր կատարման օրենսդրության իմաստով՝ պարտապանի միակ բնակարանն իրացվում է կառավարության սահմանած գումարը գերազանցող գնով, ապա կառավարության սահմանած՝ միակ բնակարանի իրացման համար նախատեսված նվազագույն գումարը վերադարձվում է պարտապանին և ենթակա չէ բռնագանձման:

Ի թիվս «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով նախատեսված գույքի սպառիչ ցանկի՝ օրենսդիրը հատուկ նորմ է նախատեսել Օրենքով՝ սահմանե-

⁶¹ Այս առնչությամբ ուշագրավ է Վճռաբեկ դատարանի թիվ ԱՎԴ/0060/04/17 սնանկության գործով 05.06.2020թ. որոշումը:

լով, որ պարտապանի կամ այլ անձանց պահանջով դատարանի որոշմամբ բռնագանձում կարող է չտարածվել բռնագանձման ենթակա պարտապանի այն գույքի վրա, որի արժեքը էական ազդեցություն չի կարող ունենալ պարտատերերի պահանջների բավարարման համար:

Օրենքը առանձնահատուկ կարգավորումներ է նախատեսում նաև սնանկության վարույթի ավարտի հետևանքների առումով: Մասնավորապես, բացի սնանկության վարույթից հետո իրավաբանական անձանց համար իրենց ուժը պահպանող պարտավորություններից, ֆիզիկական անձը չի ազատվում նաև հետևյալներից .

1) սնանկության դիմում ներկայացնելուն նախորդած 90 օրվա ընթացքում ստանձնած և 100.000 դրամը գերազանցող պարտավորություններից,

2) ուսման վարկավորման գումարը վերադարձնելու պարտավորությունից,

3) պարտատերերի պահանջներից բխող պարտավորություններից, եթե պարտապանը սնանկության վարույթի ընթացքում գույք է թաքցրել՝ թաքցված գույքի արժեքի չափով:

§ 9. Սնանկության գործով կառավարչի վարձատրությունը Ֆինանսական առողջացման դեպքում

Ֆինանսական առողջացման դեպքում Օրենքը սահմանում է կառավարչի վարձատրության որոշակի առանձնահատկություններ: Այսպես՝ Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասը նախատեսում է, որ պարտապանի ֆինանսական առողջացման դեպքում կառավարչի վարձատրության չափը սահմանվում է ֆինանսական առողջացման ծրագրի իրականացման ընթացքում պարտատերերի պահանջների բավարարման չափի 5-ից 10 տոկոսի չափով: Բացի այդ՝ ֆինանսական առողջացման ծրագիրը հաջողությամբ ավարտելու և պարտապանի առողջացման դեպքում կառավարչին վճարվում է 5-ից 10 տոկոսի չափով պարգևավճար՝ ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված կարգով, իսկ կոնկրետ չափը, ըստ էության, պետք է որոշվի պարտատերերի կողմից՝ ծրագրի շրջանակներում:

Հարկ է ընդգծել, որ, ի տարբերություն նախկին օրենսդրության, Օրենքի փոփոխությունների արդյունքում նախ բարձրացվել է պարգևավճարի չափը՝ այն հասցնելով առավելագույնը 10 տոկոսի նախկին 5-ի համեմատ, բացի այդ, հատուկ ֆիքսվել է ֆինանսական առողջացման ծրագիրը հաջողությամբ ավարտելու և պարտապանի առողջացման դեպքում կառավարչին վճարվելիք պարգևավճարի չափը՝ կրկին 5-ից 10 տոկոսի չափով: Նշված փոփոխությունները նպատակ ունեն խթանելու պարտապանի ֆինանսական առողջացմանն ուղղված կառավարիչների ջանքերը:

Այդուհանդերձ, հարկ է նաև նկատի ունենալ, որ սնանկության կառավարիչների վարձատրության մոդելը պետք է

ոչ միայն Խրախուսի սնանկության կառավարչին իրականացնելու պարտատերերի պահանջների առավելագույնս բավարարում սեղմ ժամկետներում, այլև պետք է հաշվի առնի գործի բարդությունը:

Կարևոր է նշել, որ նման եղանակը թույլ կտա ունենալ արդարացի, թափանցիկ և հստակ վարձատրության համակարգ, որը նաև կնպաստի սնանկության կառավարիչների պատշաճ գործունեության ապահովմանը: Վարձատրության համակարգը պետք է լինի այնպիսին, որ դրդի սնանկության կառավարիչներին հասնել պարտատերերի համար լավագույն արդյունքին, ինչպես նաև կխրախուսի այն լուծումները, որոնք ուղղված կլինեն հնարավորության դեպքում բիզնեսի՝ որպես գործող ձեռնարկության պահպանմանը⁶²:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ սնանկության կառավարչի վարձատրության վերաբերյալ առկա են երեք հիմնական մոտեցումներ՝

- առողջացման/գործի բարդության վրա հիմնված մոտեցում (Չեխիայի Հանրապետություն, Ռուսաստան, Ֆրանսիա, Հունգարիա, Սերբիա և Սլովենիա), որով սնանկության կառավարչի վարձատրությունը որոշվում է սահմանված չափերի շրջանակներում՝ բավարարված պահանջների չափերով՝ լուծարման դեպքերում կամ ելնելով գործի բարդությունից՝ վերակազմակերպման դեպքերում,

- գործադրված ժամանակի և ցուցաբերած ջանքերի մոտեցում (Նիդերլանդներ, Բելգիա, Իռլանդիա, Նորվեգիա), որը հիմնված է ծախսված իրական ժամանակի հաշվարկի վրա՝ սահմանված ժամավճարի չափով,

⁶² Տե՛ս «Սնանկության ոլորտի բարեփոխման ճանապարհային քարտեզ և գործողությունների ծրագիր», էջ 45-46:

- դատական/հայեցողական մոտեցում (Ռումինիա, Լեհաստան, Դանիա, Շվեդիա), որտեղ վարձատրության չափը հիմնված է գործի բարդության տարբեր ասպեկտների վրա և թողնված է դատարանի գնահատմանը⁶³:

Վկայակոչված յուրաքանչյուր մոտեցում ունի և՛ դրական, և՛ բացասական կողմեր: Այդ իսկ պատճառով դրանցից որևէ մեկի կամ մի քանիսի միջև ընտրություն կատարելիս որոշ հանգամանքներ պետք է ստանան համարժեք գնահատական: Մասնավորապես, ինչպես է ընտրված մոտեցումը խրախուսում սնանկության կառավարիչներին իրականացնելու պարտատերերի պահանջների առավելագույնս բավարարում սեղմ ժամկետներում, արդյոք ընտրված եղանակն ապահովում է սնանկության բոլոր կառավարիչների վարձատրության պարզ, թափանցիկ և արդարացի համակարգ, արդյոք հաշվի է առնվում գործի բարդությունը, արդյոք այն սահմանում է սնանկության կառավարիչների պատշաճ խրախուսման մեխանիզմներ և կանխում է նրանց ոչ պատշաճ և կոռուպցիոն վարքագիծը, արդյոք վարձատրության համակարգը սնանկության կառավարիչների մասնագիտությունը դարձնում է գրավիչ լավագույն մասնագետների համար⁶⁴:

Ինչպես բխում է սնանկության կառավարչի վարձատրության վերաբերյալ ներկայացված դրույթներից, ՀՀ օրենսդրությունը որոշակիորեն որդեգրել է առաջին մոտեցումը: Միևնույն ժամանակ, հետագա բարեփոխումների շրջանակում այս հարցը քննարկման և վերանայման անհրաժեշտություն կարող է ունենալ:

⁶³ Տե՛ս նույն տեղում, էջ 61-62:

⁶⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 63:

**ՏԻԳՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԴԱԴՈՒՆՑ**

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
(ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ)**

**ТИГРАН МАРКОСЯН
ТИГРАН ДАДУНЦ**

**ПРОЦЕДУРА ФИНАНСОВОГО ОЗДОРОВЛЕНИЯ В
РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ
(НАУЧНО-ПРАКТИЧЕСКОЕ ПОСОБИЕ)**

**TIGRAN MARKOSYAN
TIGRAN DADUNTS**

**THE PROCEDURE OF FINANCIAL REHABILITATION IN THE
REPUBLIC OF ARMENIA
(SCIENTIFIC AND PRACTICAL HANDBOOK)**

Ստորագրված է հրատարակման՝ 27.04.2022:
Չափսը՝ 60x84 1/16:
Ծավալը՝ 6.5 տպ. մամուլ:

ԵՊՀ հրատարակչություն
Ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.y-su.am